



840  
4-78

13 APR 2011

ԹԱԴԵՍ ԱՒԴԱԼԻԲԵԳԵԱՆ

# ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

Պատմական-գրական վերլուծություն

Հրատարակություն  
Խ Ա Չ . Ա Ւ Գ Ա Լ Ի Բ Ե Գ Ե Ա Ն Ի  
1913



91.99.0928  
4-78



~~92(ՆԱԲ) 338~~

~~Ա-77~~

ԹԱԴԷՈՍ ԱԻԴՈՒԲԵՆՆ

891.99.092 (Նախադրյալ)


Ա-78

# ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

Պատմական—գրական վերլուծություն

~~1356~~

768  
2538



ԱՅՈՒԳՎԱԾ Է  
1964 թ. 1913

1913

Վ. Ա. Գ. Ա. Բ. Շ. Ա. Ս.

Ելեքարաշարժ Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի



12.03.2013

70.160

### ՅԱՌԱՋԱԲԱՆ

«Փոքր է լուկ և միայն ստանալը և սեպհականները զանազան զիտութիւնը և տեղեկութիւնը, որ յայտնագործել էին ուրիշները: Հարկաւոր է այդ ստանալուց և սեպհականուց նոյն իսկ մարդու մէջ կատարուի մի յեղափոխութիւն—վերածնելութիւն. նորան անհրաժեշտ հարկաւոր է սեպհական գործունէութիւն, ընդունող, գնահատող և իշխող այդ զիտութիւնների վերայ, հարկաւոր է մտքի արարչական, ստեղծագործական գորութիւն. հարկաւոր է, որ այդ տեղեկութիւնքը զբուէին ոչ որպէս սերմեր աւազի վերայ, այլ շարժողութիւն պատճառէին հողի մէջ և պտուղ տային: Այս ստեղծագործական գորութիւնը մտքի է նորա զիտաւոր գորութիւնը»:


Մ. Նալբանդեան

Դեռ ևս 1910 թուականի սկզբին նպատակ ունենալով ընթերցողներին ծանօթացնելու այն զաղափարների հետ, որ պարունակում է Միքայէլ Նալբանդեանի «Ներկրագործութիւնը որպէս ուղիւ ճանապարհ» անունով երկը, մտադրուել էինք մեր այս փոքրիկ աշխատութեան մէջ ամփոփուած մտքերը զրի առնել, բայց մի քանի կողմնակի հանգամանքներ ստիպեցին կարճ ժամանակով յետաձգելու այս ձեռնարկութիւնը:

Յետագայում, 1911 թուականին, Նալբանդեանի մասին մէկ երկու աշխատութիւնների հրատարակուելն իմանալով յետ կանգնեցինք առաջադրած նպատակից՝ խորհելով, որ հայ հրատարակախօսի երկերն առանձնապէս ուսումնասիրող իւրաքանչիւր զիտակ անձ ամենայն հաւանականու-

Վ. Ա. Գ. Ա. Բ. Շ. Ա. Պ. Ա. Ս.

Էլեքտրաշարժ Տպարան Մայր Աթոսոյ Ս. Էջմիածնի



1585-92



Թեամբ երևան կհանէ ուշադրութեան արժանի գլխաւոր փաստերը և կյանդէ միակ հնարաւոր եզրակացութիւններին: Ուրեմն աւելորդ է ու փաստակար շոայութիւն,—մտածում էինք,—հայոց գրական նեղ հրապարակը դուրս բերել մի նոր, նոյնպիսի մտքեր ամփոփող գրուածք:

Սակայն լոյս տեսած նոր ուսումնասիրութիւններին ծանօթանալուց յետոյ տեսնելով, որ մեր լաւատես ու այլահաւան ենթադրութիւնները չեն իրականացած, և նկատելով, որ Նալբանդեանի մասին տարբեր բանակներէց արտայայտուած թիւր կարծիքների վիժակը յորգանալու վրայ է, այլ և կամենալով մերովսանն յարգել հայ Գրակրօսի նուիրական յիշատակը նրա գլխաւոր երկի հրատարակութեան յիսնամեակի (1862—1912) առթիւ,—վստահացանք ընթերցողների առաջ դնել մեր այս թուուցիկ ուսումնասիրութիւնը:

Այս վերլուծական ախարկի մէջ չեն շոջափուած Նալբանդեանի երկի փիլիսոփայական ու տնտեսագիտական միքանի կարծիքները, օրինակ՝ կեանքի, փիլիսոփայութեան առարկայի, փողի ու սրա շրջանառութեան, թանգութեան, ու այլ առարկաների մասին յայտնած մտքերը, որովհետեւ մեր նպատակն է եղել պարզել, թէ ինչ գասակարգային ոգի է իշխում նրա հայեացքների մէջ: Ուստի այս նպատակին հասնելու համար ի նկատի ենք ունեցել ոչ թէ «Երկրագործութեան» մէջ ամփոփուած ամեն մի փոքրիկ մանրամասնութիւն, այլ հեղինակի աշխարհահայեացքի հիմնական մասը, այն է՝ տնտեսութեան ձևերի մասին յայտնած կարծիքները:


Ճշմարտասիրութիւնը թեկադրում է ասել, որ աշխատութեանս մէջ Նալբանդեանի մասին յայտնած մտքերից մի քանիսը աւելի առաջ էլ արտայայտուած են եղել հայ մամուլի ու գրականութեան մէջ: (Հմմտ. 1. «Միքայէլ Նալբանդեան» յօդուած Ալ. Մարտունու, «Հորիզոն» լրագիր, Թիֆլիս, 1910 թ. № № 246 ու 247 և 2. «Միքայէլ Նալբանդեանի տնտեսական թէորիան» Եր. Պալիանի, Բաղու,

1911 թ.): Սակայն և այնպէս մեր այս գրուածքը նախորդ աշխատութիւնների սոսկ կրկնութիւնը չէ: Նալբանդեանին վերաբերեալ գրականութեանը ծանօթ ընթերցողը հեշտութեամբ կնկատէ այն գաղափարները, որոնք առաջին անգամ այս վերլուծութեան մեջ են երեւան գալիս: Ակնարկս վերաբերում է յասկապէս գրուածքիս XI—XVI գլուխներին:

Բացի այս մենք չենք բաւականացել ուշադրութեան արժանի այս կամ այն կէտի վրայ լուր մատնանիշ լինելով, չենք հարկադրել ընթերցողին հաւատալու մեր «ազնիւ խօսքին», այլ աշխատել ենք նրան համոզել ու առաջադրած թեզիսներն ապացուցանել՝ առաջնորդ ընդունելով մեծ պատմարանի—Թոմաս Բոկլի այն խօսքերը, թէ «բոլորովին այլ բան է որեւէ ընդարձակ, ընդհանուր ճշմարտութիւն իւրացնելը և այլ բան՝ այս ճշմարտութիւնն իւր բոլոր ճիւղաւորութիւններով հետազօտելն ու ամեն ընթերցողի համար համոզիչ ապացոյցներով հաստատելը»:

Թ. Ա.

1912 թ. օգոստոսի 25-ին  
Մեծ Ղարաքիլիսա:





# ՄԻՔԱՅԻԼ ՆԱԼԲԱՆՊԵԱՆ

Պատմական — գրական վերլուծութիւն.

I.

Միքայել Նալբանդեանը ռուսահայ գրականութեան առաջին շրջանի ուրիշ հեղինակների նման ծառայել է գրականութեան մի քանի ճիւղերի: Գրել է մինչև այժմ էլ սիրելի ու տարածուած բանաստեղծութիւններ, օրինակ՝ «Ազատն Աստուած», «Իտալացի աղջկայ երգը», «Մանկութեան օրեր», «Երազ», «Վայր ընկնող աստղեր», «Հիմի էլ խօսենք» և այլն՝ ունի վէպեր, օրինակ՝ «Մինին խօսք, միւսին հարս» ու «Մեռելահարցուկ», լոյս է ընծայել գիտական աշխատութիւն — Ազգար Փարպեցու Վահան Մամիկոնեանին ուղղած թղթի աշխարհաբար հրատարակութիւնը բարձրաթիւ ծանօթութիւններով և վերջապէս արել է օտար լեզուներից թարգմանութիւններ, որոնցից ամենայայտնին է էժեն Սիւի «Թախառական հրէան»:

Զնայելով, որ յիշեալ աշխատութիւններն արժէքաւոր են գրականութեան պատմագրի համար, որովհետև պատկանում են արևելեան աշխարհաբարով գրուած առաջին երկերի թուին և նոյն ճիւղերում կատարուած անդրանիկ աշխատութիւններից են, այնուամենայնիւ նրանք չէին կարող Նալբանդեանի համար նշանաւոր հեղինակի անուն վաստա-



կել: Հայ մաքրի դարգացման պատմութեան մէջ Միքայէլ Նալբանդեանը մեծ տեղ է գրաւում ոչ թէ բանաստեղծական, վիպական, դրամական ու թարգմանական աշխատութիւններով, այլ հրապարակախօսական գրուածքներով:

Սակայն այս վերջին երկերը սկզբից և եթ քարացած, անփոփոխ աշխարհահայեացք չեն պարունակում. ժամանակի ընթացքում Միքայէլ Նալբանդեանի դաւանած գաղափարները փոփոխութեան ենթարկուելով գարգացման գաղաթնակէտին են հասնում յատկապէս «Երկրագործութիւնը որպէս ուղի դձանապարհ» գրուածքի մէջ, որը հայ երևելի հեղինակի հրապարակախօսական երկերի պսակն է կազմում:

Յիշեալ գրուածքը, որ առաջին անգամ հրատարակուել է Փարիզում 1862 թուականին և որի վրայ հեղինակի անուան փոխարէն գրուած է եղել Սիմէօն Մանիկեան կեղծանունը, հայ հրապարակախօսի գլխաւոր աշխատութիւնը լինելով հանդերձ նաև ընդհանրապէս հայոց գրականութեան նշանաւոր հեղինակութիւններէից մէկն է հետևեալ պատճառով: Հայոց գրականութիւնը, որ հարուստ է եղել կրօնական ու դաւանաբանական հարցերին նուիրուած երկերով, պատմագրական աշխատութիւններով, որ այժմ էլ հարուստ է վէպերով, թատերագրութիւններով, բանաստեղծութիւններով և այլն, — չափազանց աղքատ է անտեսական խնդիրների քննութեամբ զբաղուող հեղինակութիւններով: Այս է

պատճառը, որ մինչդեռ օտար գրականութիւնների մէջ Նալբանդեանի երկի նման երկը բոլորովին երկրորդական, փոքր տեղ կզբաւէր, մեր՝ անտեսական հարցերին նուիրուած գրքերով աղքատ գրականութեան մէջ «Երկրագործութիւնը» հանդիսանում է առաջնակարգ ու կարևոր երկ, որովհետև պատկանում է անտեսական խնդիրներով զբաղուող սակաւաթիւ գրքերի թուին: Հասկանալի է, որ այսպիսի մի գրուածք անուշադրութեան մատնել չէ կարող ոչ մի բանիմաց ուսումնասէր:

Նալբանդեանի այս նշանաւոր երկի — «Երկրագործութեան» ուսումնասիրութիւնը վճռական նշանակութիւն ունի ոչ միայն յայտնի հրապարակախօսի գրական գործունէութեան դասակարգային գոյնը որոշելու և հայ անտեսական աշխարհայեացքի զարգացման մի նշանաւոր էջը լուսաբանելու, այլ և ուսուսահայ գրականութեան առաջին շրջանի (50 — 70 թ. թ.) սոցիոլոգիական բնոյթը երևան հանելու համար:

Մի քանի տարի է, որ հրապարակի վրայ գրուած է վերջին խնդիրը, այն է, թէ ինչ դասակարգի է դէտրոգիա է բովանդակում այն գրականութիւնը, որ իբրև ժառանգութիւն թողել են Սաչատուր Աբովեանը, Ստեփաննոս Նաղարեանը, Միքայէլ Նալբանդեանը, Ռափայէլ Պատկանեանը, Սմբատ Շահագիրեանը և այլն: Այս հարցի գրուելու հետ միասին յայտարարուած է նաև նրա միակողմանի պատասխանը, ըստ որի այս գրականութիւնը միայն



մի դասակարգի—բուրժուազիայի իդէոլոգիա է պարունակում: Սոյն կարծիքի հակառակ արտայայտուել է նաև այն միտքը, թէ յիշեալ հեղինակները գաղափարակից անձնաւորութիւններ չեն, այլ կուում են գանազան դրօշների տակ, յանուն տարբեր իդէալների. ուրիշ խօսքով՝ հայ վերածնութեան գրականութիւնը միայն մի դասակարգի միապաղաղ իդէոլոգիա չէ. այս օպպոզիցիոն գրականութիւնն ինքն իւր մէջ ունի աջակողմ և ձախակողմ. այս գրականութիւնն իւր տարբեր ներկայացուցիչներն բերանով արտայայտում է ոչ միայն մանուկ բուրժուազիայի, այլ նաև հասարակական ուրիշ խմբերի, սրանց միջից գլխաւորապէս գիւղացիութեան իդէալները: \*)

Այս վէճի՝ այս կամ այն պատասխանին յանգելը նշանակութիւն ունի ոչ միայն հայոց գրականութեան պատմութեան, այլ և այն ժամանակուայ հայ հասարակութեան անտեսական-սոցիալական դրութեան պատկերի համար: Եւ այս շատ պարզ է: Որովհետև իդէոլոգիան անտեսական կառուցուածքի արտացոլումն է մարդկանց գիտակցութեան մէջ, և իդէոլոգիայի որոշ կերպարանքին համապատասխանում է անտեսական որոշ կառուցուածք, ապա հասկանալի է, որ երբ

իդէոլոգիան մեզ նոր կերպարանքով է յայտնուում, մենք այլ ևս չենք կարող հին, նախկին անտեսական կառուցուածքը երևակայել: «Վերնաշէնքի»—մարդկանց գիտակցութեան մասին մեր կարծիքը փոխելուց յետոյ ստիպուած ենք փոխելու նաև մեր հայեացքը «հիմքի»—հասարակական կացութեան մասին:

Միքայէլ Նալբանդեանի «Երկրագործութիւնը որպէս ուղիղ ճանապարհ» անունով գրուածքը, ի միջի այլ հետեանքների, կարող է նաև ամենայաջող վախճանի հասցնել վերոյիշեալ վէճը, որովհետև նրա մէջ ամփոփուած իդէոլոգիան հանդէս է գալիս ոչ թէ գեղարուեստական հանդերձի տակ, որ սոցիոլոգիական տեսակէտից աւելի գժուարըմբունելի է, այլ տրամաբանական պատճառաբանութիւններով, որոնք աւելի մեկին ու մատչելի են հետախոյզ մտքին:

II

«Երկրագործութեան» առաջին էջերը նուիրուած են կապիտալիզմին, իսկ մնացածը՝ հայ հասարակութեան անտեսական խնդիրներին: Նալբանդեանի վերաբերմունքը դէպի կապիտալիզմն ու հայ հասարակական խմբերը միանգամայն ակներև կացուցանելու համար հարկաւոր է նախապէս մի քանի խօսք ասել կապիտալիզմի ու նրա իդէոլոգների մասին:

Ի՞նչ է կապիտալիզմը:

Եթէ ասենք, թէ կապիտալիզմի ամենաէական յատկանիշը կազմում է այն, որ մի դասակարգ շահագործում է մի ուրիշ դասակարգի, որ հասարա-

\*) Տեսէք «Սուրհանդակ» լրագիր, Թիֆլիս, 1911 թ. № № 286 և 287:



մի գասակարգի—բնւրժոււագիւտյի ի դէպու-  
 գիւտ է պարունակում: Սոյն կարծիքի հակա-  
 ուակ արտայայտուել է նաև այն միտքը, թէ յիշեալ  
 հեղինակները զաղափարակից անձնաւորութիւններ  
 չեն, այլ կուում են զանազան դրօշների ազի, յա-  
 նուն տարբեր իդէալների. ուրիշ խօսքով՝ հայ վե-  
 րածնութեան գրականութիւնը միայն մի  
 գասակարգի մի ապագա իդէպուգիւտ չէ. այս  
 օպպոզիցիոն գրականութիւնն ինքն իւր  
 մէջ ունի աջակողմ և ձախակողմ. այս գրա-  
 կանութիւնն իւր տարբեր ներկայացու-  
 ցիչներէ բերանով արտայայտում է ոչ  
 միայն մանուկ բնւրժոււագիւտյի, այլ նաև  
 հասարակական ուրիշ խմբերի, սրանց մի-  
 ջից գլխաւորապէս գիւղացիութեան իդէ-  
 ալները: \*)

Այս վէճի՝ այս կամ այն պատասխանին  
 յանգելը նշանակութիւն ունի ոչ միայն հա-  
 յոց գրականութեան պատմութեան, այլ և այն ժա-  
 մանակուայ հայ հասարակութեան անտե-  
 սական-սոցիալական դրութեան պատկերի  
 համար: Եւ այս շատ պարզ է: Որովհետև իդէպու-  
 գիւտն անտեսական կառուցուածքի արտացոլումն է  
 մարդկանց զիտակցութեան մէջ, և իդէպուգիւտյի որոշ  
 կերպարանքին համապատասխանում է անտեսական  
 որոշ կառուցուածք, ապա հասկանալի է, որ երբ

\*) Տեսէք «Սուրճանդակ» լրագիր, Թիֆլիս, 1911 թ.  
 № № 286 և 287:

իդէպուգիւտն մեզ նոր կերպարանքով է յայտնուում,  
 մենք այլ ևս չենք կարող հին, նախկին անտեսական  
 կառուցուածքը երևակայել: «Վերնաշէնքի» — մարդ-  
 կանց զիտակցութեան մասին մեր կարծիքը փոխե-  
 լուց յետոյ ստիպուած ենք փոխելու նաև մեր  
 հայեացքը «հիմքի» — հասարակական կացութեան  
 մասին:

Միքայէլ Նալբանդեանի «Երկրագործութիւնը որ-  
 պէս ուղիղ ճանապարհ» անունով գրուածքը, ի միջի  
 այլ հետեանքների, կարող է նաև ամենայնպէս վախ-  
 ճանի հասցնել վերոյիշեալ վէճը, որովհետև նրա մէջ  
 ամփոփուած իդէպուգիւտն հանդէս է դալիս ոչ թէ  
 զեզարուեստական հանդերձի տակ, որ սոցիոլոգիա-  
 կան տեսակէտից աւելի զժուարմբունելի է, այլ  
 տրամաբանական պատճառաբանութիւններով, որոնք  
 աւելի մեկին ու մատչելի են հետախոյզ մտքին:

II

«Երկրագործութեան» առաջին էջերը նուիրուած  
 են կապիտալիզմին, իսկ մնացածը՝ հայ հասարակու-  
 թեան անտեսական խնդիրներին: Նալբանդեանի վե-  
 րաբերմունքը զէպի կապիտալիզմն ու հայ հասարա-  
 կական խմբերը միանգամայն ակներև կացուցանելու  
 համար հարկաւոր է նախապէս մի քանի խօսք ասել  
 կապիտալիզմի ու նրա իդէպուգիւտների մասին:

Ի՞նչ է կապիտալիզմը:

Եթէ ասենք, թէ կապիտալիզմի ամենաէական  
 յատկանիշը կազմում է այն, որ մի գասակարգ շա-  
 հագործում է մի ուրիշ գասակարգի, որ հասարա-



կական մի խումբ ապրում է մի ուրիշ խմբի յաւելեալ աշխատանքով, ապա մեծ սխալ գործած կլինենք, որովհետեւ անգործ վայելողները ու տքնող զրկուածները հարցը կապիտալիստական տնտեսութիւնից առաջ էլ գոյութիւն ունէր: Այսպէս օրինակ՝ անտիկ տնտեսութեան ժամանակ տէրերը ապրում էին ստրուկները աշխատանքով, իսկ ֆէոդալական հասարակութեան մէջ ազնուականներին կերակրում էին ճորտերը: «Յաւելեալ արժէքը կապիտալի հարածը չէ», — և այս կողմից յիշեալ երեք տնտեսութիւնները տարբերութիւն չունեն:

Կապիտալիզմի էական յատկանիշն, առանց որի այս տնտեսութիւնը գոյութիւն ունենալ չէ կարող, այն է, որ անմիջական արտադրողը իրաւապէս ազատ անձն է: Այժմեան անմիջական արտադրողը — բանուորը ազատ իրաւունք ունի իւր բանուորական ոյժը վաճառելու, ում որ կամենում է, մինչդեռ ճորտն ու ստրուկը իրաւապէս ազատ չէին. նրանց բանուորական ոյժի սեփականատէրն ուրիշ անձնաւորութիւն էր:

Բայց եթէ բանուորն ունենար արտադրութեան միջոցներ, այսինքն աշխատանքի միջոցներ ու աշխատանքի նիւթ, այն ժամանակ բանուորական ոյժը չէր վաճառել ուրիշին, այլ կարտագրէր իւր համար և կհարստացնէր իրեն: Ուրեմն որպէսզի բանուորն ստիպուած լինի բանուորական ոյժը վաճառել, ապա բաւական չէ, որ միայն իրաւական ազատութիւն ունենայ: Նա պէտք է մի ուրիշ, տարօրինակ «ազատութիւն» էլ ունենայ. նա պէտք է «ազատ» լինի

արտադրութեան միջոցներից, զուրկ այնպիսի սեփականութիւնից, որը կարողանար նրա համար ծառայել իբրև աշխատանքի միջոց ու նիւթ:

Ուրեմն կապիտալիստական հասարակութիւնն այն հասարակութիւնն է, որտեղ արտադրութեան միջոցները բաժանուած են տնմիջական արտադրողներից, իսկ անմիջական արտադրողները իրաւապէս ազատ բանուորներ են: Առանց ժամանակակից պրոլետարիատի չկայ կապիտալիզմ, չկայ բուրժուական սեփականութիւն:

Սակայն մարգիկ չեն ծնւում ոմանք արտադրութեան միջոցներով և ոմանք առանց արտադրութեան միջոցների. այլ խօսքով՝ հասարակութեան՝ սեփականատէր ու սեփականազուրկ բանակների բաժանուելը մարդկութեան պատմութեան մէջ մշտնջենական երևոյթ չէ, այլ պատմական հանգամանքների հետևանք: Ուրեմն տարօրինակ «ազատութիւն» ունեցող բանուոր դասակարգի գոյութիւնն էլ պատմական որոշ պայմանների արդիւնք է: Արդ որոնք են այն պատմական պայմանները, որոնց անհրաժեշտ հետևանքը լինում է ժամանակակից պրոլետարիատի գոյութիւնը:

Բանուոր բազմութեան առաջանալու պատմական պայմանը մանր գիւղացու հողազրկութիւնն ու մանր արհեստաւորի տնտեսութեան անկումն է: Թէ մանր գիւղացու և թէ մանր արհեստաւորի տնտեսութիւնը չեն հիմնւում ուրիշի աշխատանքի շահագործման վրայ. մանր գիւղացին ու մանր արհեստաւորը ապրում են



իրենց սեփական աշխատանքով: Պրովետարիատի ծննդեան, հետևաբար և կապիտալիզմի, այսինքն ուրիշի աշխատանքի շահագործման վրայ հիմնուած ժամանակակից տնտեսութեան անհրաժեշտ պայմանը մանր տնտեսութեան անկումն է, մանր արտադրողներին՝ արտադրութեան միջոցներից զրկուելը:

«Քաղաքատնտեսութիւնը, — գրում էր, «կապիտալի» հեղինակը, — սկզբունքօրէն շփոթում է մասնաւոր սեփականութեան երկու շատ տարբեր տեսակներ, որոնցից մէկը հիմնուած է արտադրողի սեփական աշխատանքի վրայ, իսկ միւսն ուրիշի աշխատանքը շահագործելու վրայ: Նա մոռանում է, որ վերջինս (ուրիշի աշխատանքի շահագործման վրայ հիմնուած սեփականութիւնը. Թ. Ս.) ոչ միայն առաջինի (սեփական աշխատանքի վրայ հիմնուած սեփականութեան. Թ. Ս.) ճիշտ հակադրութիւն է կազմում, այլ և զարգանում է նրա գերեզմանի վրայ»:<sup>\*</sup>)

Մանր — գիւղացիական ու արհեստաւորական — արտադրութիւնն և խոշոր — երկրագործական ու գործարանային — արգիւնաբերութիւնը հասարակութեան մէջ միաժամանակ գերիշխող լինել չեն կարող: Կապիտալիստական հասարակութեան մէջ մանր տնտեսութիւնը հաղիւ է քարշ տալիս իւր թշուառ գոյութիւնը, օրինակ՝ Անգլիայում, և ընդհակառակը, որտեղ գերիշխող է մանր տնտեսութիւնը, այնտեղ կապիտալիզմ կամ բոլորո-

<sup>\*</sup>) К. Марксъ: «Капиталъ». т. I. пер. В. Базарова и И. Степанова, Москва, 1909 г. 725.

վին գոյութիւն չունի և կամ սաղմնային զրութեան մէջ է, օրինակ՝ Պարսկաստանում: Արտադրութեան ու սեփականութեան այս երկու տեսակները նման են կշեռքի երկու թաթերին, որքան ծանրանում է մէկ թաթը, այնքան բարձրանում է միւսը:

Ասածներից պարզապէս հետևում է, որ մանր տնտեսութիւնները պաշտպանողը գիտակցաբար կամ անգիտակցօրէն արգելք է լինում խոշոր արգիւնաբերութեան, ուրեմն և բուրժուազիայի զարգացմանը, իսկ խոշոր արգիւնաբերութեան շատագոյն ձևերում է քայքայելու ժողովրդի, այսինքն մանր արտադրողների տնտեսութիւնը, ուրեմն նպաստում է մանր գիւղացիութեան ու մանր արհեստաւորութեան անկմանը:

III.

Բերենք մի քանի օրինակներ, որոնք հաստատելով վերևում ասածները՝ անձածկոյթ ներկայացնում են ժամանակակից շահագործող դասակարգի նուիրական ձգտումները, նրա իդէոլոգիայի ուղն ու ծովը: «Սրտի յաւելումից է խօսում բերանը»: Տեանենք, թէ հետևեալ «յաւելումներն» ինչ են վկայում բուրժուազիայի «սրտի» մասին:

XVII դարի վերջում, 1696 թուին Չոն Բեյերսը գրում է.

«Եթէ մի մարդ ունենար հարիւր հազար ակր հող, նոյնքան ֆունտ ստերլինգ փող, նոյնքան գլուխ անասուն, այն ժամանակ ի՞նչ կլինէր այս հարուստ



մարդը առանց բանուորների, եթէ ոչ մի բանուոր: Եւ որովհետեւ բանուորները հարստացնում են մարդկանց, ուստի որքան շատ բանուորներ լինեն, այնքան էլ շատ հարուստներ կլինեն... Աղքատները աշխատանքը հարուստները համար հանքավայր է»։\*)

Չոն Բելլերսից տաս տարի յետոյ, XVIII դարի սկզբում, 1706 թուին Բերնարդ դե Մանդևիլն ասում է.

«Այնտեղ, որտեղ սեփականութիւնը բաւականաչափ պաշտպանութիւն է գտնում, աւելի հեշտ կլինէր ապրել առանց փողի, քան առանց աղքատների, որովհետեւ վերջին դէպքում սով պէտք է աշխատանք կատարէր: . . . Բոլոր հարուստ ազգերի շահը պահանջում է, որ աղքատները մեծամասնութիւնն երբէք առանց գործի չմնայ և միշտ ամբողջովին ծախսէ այն բոլորը, ինչ որ ստանում է: . . . Աղատ, այսինքն իւր միջից ստրկութիւնը վերացրած ազգի համար ամենից անկասկածելի հարստութիւնն աշխատասէր աղքատների բազմութեան մէջ է ամփոփուած: Հասարակութիւնը՝ երջանիկ, իսկ ժողովուրդը նոյն իսկ իւր թշուառ դրութեամբ գոհ կացուցանելու համար անհրաժեշտ է, որ հսկայական մեծամասնութիւնը տգէտ ու աղքատ մնայ»։\*\*)

Երբ XVIII դարում անգլիացի շինականները

\*) Քաղում ենք «Капиталь-ից, I, եր. 577. Ամբողջ աշխատութեանս մէջ քաղուածների ընդգծումները մերն են:

\*\*) Նոյնը, եր. 577—578:

հողերը բռնի յափշտակելով նրանց բանուորներ էին դարձնում, և ոմանք մատնանիշ էին լինում յիշեալ երևոյթի վնասակար հետևանքների վրայ, մի հեղինակ 1773-ին այսպէս էր բացատրում արատազրոյները հողագուրկ լինելու օգուտները:

«Միայլ է այն եզրակացութիւնը, — գրում էր, — թէ երկիրն ամայացել է, որովհետեւ ազգաբնակչութիւնն այլ ևս չի վատնում իւր աշխատանքը ազատ դաշտերում: Եթէ մանր գիւղացիները ուրիշները համար աշխատող են դարձել և այսպիսով աւելի մեծաքանակ աշխատանք է գործուէնէութեան մէջ դրուած, ապա այս հանգամանքը ազգի համար օգտակար և ցանկալի է միայն: Արդիւնք աւելի շատ է ստացուում»։\*)

Արթուր Իւնգը, որին «կապիտալի» հեղինակը «յաւելեալ արժէքի ֆանատիկոս» է անուանում, 1774 թուին այսպէս էր դատում մանր արտադրութեան մասին.

«Ի՞նչ օգուտ կստանար ժամանակակից պետութիւնը մի ամբողջ զաւառից, որի հողը հին հողմէական եղանակով մշակէին մանր, անկախ գիւղացիները, այն էլ ամենալաւ եղանակով: Ի՞նչ նպատակի կհասցնէր այս, եթէ ոչ այն նպատակին միայն, որ այստեղ կարտագրուէին մար-

\*) Նոյնը, եր. 688: Այս հատուածի առթիւ Մաքքսը հեգնելով միջանկեալ նկատում է. «Հասկանալի է, որ փոխակերպումը գիւղացիները ազգի անդամների թուին չեն պատկանում»:



դիկ (կբազմանային. Թ. Ա.),—մի բան, որ  
ինքն ըստինքեան ոչ մի նշանակութիւն  
չունի»։\*)

Անգլիացի քահանաներից մէկը՝ Townsend կար-  
ծում է, որ աղքատութիւնը Աստու ու բնութեան  
ստեղծած երևոյթներից մէկն է ու անխուսափելի  
պայման քաղաքակրթութեան զարգացման։

«Ըստ երևոյթին բնութեան օրէնքն այնպէս է,—  
գրում է այս քահանան 1786-ին,—որ աղքատները  
որոշ չափով անհեռատես են, այնպէս որ հասարա-  
կութեան մէջ միշտ գտնւում են մարդիկ, որոնք  
կատարում են ամենաստրկական, ամենակեղտոտ ու  
ամենաստոր գործողութիւններ։ Այս հանգաման-  
քի շնորհիւ մարդկային երջանկութեան  
գումարը սաստիկ մեծանում է. աւելի նըր-  
բասուն մարդիկ ազատւում են ծանրու-  
թիւններից և առանց արգելքի կարող են  
նուիրուել իրենց աւելի բարձր կոչմանը...  
Աղքատների մասին հրատարակուած օրէնքը ձգտում  
է խանգարելու ներդաշնակութիւնն ու զեղեցկու-  
թիւնը, համաչափութիւնն ու կարգն այս սխտեմի,  
որ սահմանել են երկրիս վրայ Աստուած ու բնու-  
թիւնը»։\*\*)

Տնտեսագէտ հեղինակներից Դեստիւտ դե-Տրա-  
սին էր վիճակուած յիշեալ մտածմունքներն ամ-  
փոփել մի կլասսիկ աֆորիզմի մէջ։

\*) Նոյնը, եր. 193:

\*\*\*) Նոյնը, եր. 610:

«Աղքատ ազգեր նրանք են,—նկատում է  
նա սառնասրտութեամբ,—որտեղ ժողովուրդը  
բարօր վիճակ ունի, իսկ հարուստ ազգեր՝  
նրանք, որտեղ ժողովուրդը սովորաբար  
աղքատ է»։\*)

Այս ընդարձակ հատուածները ցոյց են տալիս  
նախ այն, որ բուրժուազիայի էգէոլոգները  
ըմբռնում են, թէ այսպէս կոչուած «ազ-  
գային» հարստութիւնը հետեանք է ժողո-  
վրդի աղքատութեան, ուրիշ խօսքով՝ այն հա-  
րստութիւնն ու այս աղքատութիւնը երկուորեակներ  
են, և երկրորդ այն, որ կապիտալիստական  
տնտեսութեան նոյն շատագովները մանր  
արտադրութեան անկումն անհրաժեշտ  
պայման են համարում խոշոր, այսինքն  
բանուորի շահագործման վրայ հիմնուած  
արդիւնաբերութեան զարգացման համար։

Բուրժուազիայի էգէոլոգի՝ դէպի մանր տնտե-  
սութիւնն ունեցած վերաբերմունքը շատ պարզ երևան  
է գալիս մանաւանդ այն ժամանակ, երբ խօսք է լի-  
նում գաղութների մասին։ Սովորական իմաստով գա-  
ղութ են կոչում նորաշէն բնակավայրերը, որոնց  
ազգաբնակիւթիւնը գաղթել է մի ուրիշ տեղից. օրի-  
նակ՝ ասում ենք. Փարիզի հայ գաղութը, Նոր Զու-  
ղայի գաղութը և այլն։ Բայց տնտեսագիտական ի-  
մաստով գաղութ անուանում է երկրի այն մասը,  
որտեղ ոչ միայն անմշակ հողերի առատութիւն կայ,

\*) Նոյնը, եր. 611:



այլ և հողը հասարակութեան սեփականութիւնն է կազմում, այնպէս որ գաղութի իւրաքանչիւր անդամ, հին թէ նորեկ, կարող է նրանից իւր համար մշակելի բաժին ստանալ: Բուրժուազիայի էգէտրոզը սրտի ցաւով տեսնում է, որ գաղութներում երկար ժամանակ չէ զարգանում կապիտալիզմը, որովհետև գաղթականները օտարի անտեսութեան մէջ իբրև բանուոր շահագործուելու փոխանակ՝ գերադաս են համարում չարչարուել սեփական անտեսութեան վրայ: Գաղութի ազատ հողի ֆոնդը հնարաւորութիւն է տալիս ձեռք բերելու անկախ հողաբաժին ու վարելու սեփական անտեսութիւն: Բացակայում է պրոլետատիատը, ուստի և չէ զարգանում կապիտալիզմը:

«Որտեղ հողը շատ արժան է, — գանդատում էր Wakefield-ը 1835 թուին, — և բոլոր մարդիկ ազատ են, որտեղ ամեն մէկը կարող է իւր համար հողաբաժին ստանալ ցանկութեան համեմատ, այնտեղ աշխատանքը ոչ միայն շատ թանկ է (եթէ հաշուի առնենք այն մասը, որ ստանում է բանուորը իւր արտադրած արդիւնքից), այլ և դժուար է ընդհանրապէս որևէ գնով ի մի կցորդուած (комбинированный) աշխատանք ձեռք բերել: . . . Եթէ կապիտալը (ուզում է ասել արտադրութեան միջոցները, թ. Ա.) հաւասար մասերով է բաշխուած հասարակութեան անդամների միջև, ապա ոչ ոք շահագրգռուած չէ կապիտալ աւելի կուտակելու, քան կարող է գործադրել սեփական ձեռքերով: Որ ոչ չափով այս երևոյթն է նկատուում ամերիկական նոր գաղութներում,

որտեղ հողային սեփականութեան սաստիկ սէրն արգելք է լինում վարձու բանուոր դասակարգի գոյութեան: . . . Սան-Վոմինգոյի առաջին սպանացի գաղթականները չունէին Սպանիայից բերած և ոչ մի բանուոր: Առանց բանուորների կապիտալը կոչնչանալ կամ կրճատուելով կհասնէր այնպիսի մանր չափերի, որքան որ կարող էր գործադրել իւրաքանչիւր անհատ բացառապէս սեփական ձեռքերի օգնութեամբ: Իրապէս հէնց այս տեղի ունեցաւ անգլիացիներին հիմնած վերջին գաղութում, որտեղ սերմերից, անասուններից ու գործիքներից կազմուած մեծ կապիտալը ոչնչացաւ վարձու բանուոր չգտնելու պատճառով, և որտեղ ոչ մի գաղթական չունի այնպիսի կապիտալ, որ իւր չափերով շատ աւելի մեծ լինէր, քան կարող էր նա գործադրել սեփական ձեռքերի օգնութեամբ»: \*)

Wakefield-ի այս տրտունջներն այլ ևս կասկած չեն թողնում, որ մանր արտադրութեան իշխած տեղում չկայ պրոլետատիատ, ուստի և չկայ կապիտալիզմ, չկայ բուրժուական սեփականութիւն: Գաղութները ի առաջին շրջանի կեանքն անհերքելի կերպով երևան է հանում այն հակադրութիւնը, որ գոյութիւն ունի մանր արտադրութեան կամ անձնական աշխատանքի վրայ հիմնուած անտեսութեան և լսողութեան

\*) Նոյնը, կր. 727—728:



իւր պաւանած «ազգի», այսինքն հասարակ ժողովրդի շահերի տեսակէտից է մօտենում Նալբանդեանը հասարակական հարցերի, ի միջի այլոց նաև կապիտալիզմի քննութեան:

Պատմելով, թէ ինչպէս հարիւրաւոր անգամ ինքը լսել է, որ Անգլիան ու Ֆրանսիան հարուստ են, թէ ինչպէս շատերը գովում ու բիւր երանի են տալիս անգլիացիներին ու ֆրանսիացիներին, Նալբանդեանը բողոքում է նման կարծիքների դէմ:

«Այն ժամանակ միայն ստուգապէս կարող ենք ասել, թէ Անգլիան հարուստ է, եթէ այն միլիոններ քաղկացնող անհատների (ժողովրդի, թ. Ս.) մօտ ասանենք նիւթական կարողութեան նշմարանք»:<sup>\*</sup>)

Այսպիսի նշմարանք չէ նկատում հեղինակը, ուստի և եզրակացնում է ի գարմանս իւր ընթերցողներին.

«Անգլիական ազգը ամեն ազգից աղքատ է և ամեն ազգից աւելի վտանգի ենթակայ»:<sup>\*\*</sup>)

Ի՞նչն է անգլիական ու ֆրանսիական ազգի, հասարակ ժողովրդի թշուառութեան պատճառը:— Կապիտալիզմը, — պատասխանում է հեղինակը, — որի ժամանակ չքաւոր մասսան ենթակայ է ամեն տեսակ պատահարների վեաւակար ազդեցութեան:

Ներ տալ թոյլատրում են բարոյականութիւնը, արդարութիւնը»: В. Святловскій. «Очерки по истории политической экономии». СПб., 1910, стр. 344:

<sup>\*</sup>) Մ. Նալբանդեանի երկերը, Բ. հր. 313:

<sup>\*\*</sup>) Նոյնը, հր. 312:

«Ամերիկան պատերազմ ունի իւր մէջ, չէ կարող բամբակ տալ Անգլիային, նորա բամբակեղէն ապրանքի գործարանքը փակոււմ են, գործարանատէրքը սնանկանում և անգործ մնացած բիւրաւոր գործաւորքը օրական հացի կարօտ և վերջին յուսահատութեան մէջ: . . . Մեր աչքի առջև են բիւրաւոր անգործ գործաւորք, որ տանջոււմ են սովից և վերջին ճիգն են թափում պատերազմելով մի ծայրացեալ աղքատութեան հետ: . . . Անգլիոյ մէջ որեւիցէ մի ձեռագործի ընկնելու կամ ընթացքից զրկուելու հետ կապակից է բիւրաւոր անհատների թշուառութիւնը: Մի տեսակ ժապաւէն, որ առաջ գործածական էր, գուրս ընկաւ սովորութենից և ժողովուրդը դադարեցաւ գնելուց, սրանից աւելի ինչ հասարակ բան կարող է լինել: Բայց եկէք, նայենք այս հասարակ բանի հետևանքին: Հագարաւոր խանութներ, հարիւրաւոր գործարանք և բիւրաւոր գործաւորք մնացին դարձեալ անգործ, անհաց, անտուն անտէր: Ֆրանսիայի մէջ կրնն քաղաքում նոյնպէս փակուեցան մի քանի գործարանք, գործաւորներին պատահեցաւ գրեթէ նոյն ճակատագիրը, ինչ որ Լոնդոնում: \*) Հարճւստ է անգլիական ազգը, եթէ մի քանի գործարան փակուելով կամ մի ժապաւէն գործածութիւնից դուրս ընկնելով բիւրաւոր մարդիկ և բիւրաւոր գերգաստանք դառն աղքատութեան հետ պատերազմելով կարող են սովամահ կորսուել: Հարճւստ է ֆրանսիական ազգը, եթէ մի քաղաքում մի քանի

1356

<sup>\*</sup>) Նոյնը, հր. 310—311:



գործարանք փակուելով մի ահագին բազմութիւն գործաւորներ իրաւաստարարութիւն զէպի մուրացկանութիւն: . . Ո՛չ, հարուստ չէ, ասում ենք և այն դրականապէս: . . . Ի՞նչ հարկաւոր է մեզ ազնուականութիւն անհուն հարստութեան տէր լինելը, ի՞նչ հարկաւոր է մեզ անգլիական շրամանոցի հսկայութիւնը, ի՞նչ հարկաւոր է անգլիական կառավարութեան դրամի կարօտ չլինելը, մինչդեռ միլիոնաւոր ժողովրդի կեանքը կախում է բամբակից ու ժապաւէնից»: \*)

\*) Նոյնը, եր. 319—320: Նալբանդեանից 16 տարի առաջ, 1846 թուին մի գերմանացի այսպէս էր տրանջում կապիտալիզմից «Triersche Zeitung»-ի մէջ. «Մեր քաղաքատնտեսները բոլոր ոյժերով ձգտում են Գերմանիան բարձրացնելու արգիւնաբերութեան այն աստիճանի վերայ, որից Անգլիան այժմ ուրիշ երկիրները վերայ լելում է: Անգլիան նրանց իգէալն է: Անշուշտ Անգլիայի այս տեսքը շատ գեղեցիկ է: Անգլիան ունի իւր կալուածները բոլոր աշխարհաշուքի է: Անգլիան ունի իւր ազգայնութիւնն ամեն տեղ մասերում, կարողանում է իւր ազգայնութիւնն ու պատերազմանցները, ունի ամենահարուստ առետրական ու պատերազմական նաւատորմ, գիտէ բոլոր առետրական դաշինքների մականակ գաշնագիրներին շահագործել, ունի ամենաշահաժամանակ գաշնագիրներին շահագործել, ունի ամենաշահազէտ առետրականներ, ամենանշանաւոր կապիտալիստներ, ամենանշարագէտ գլուխներ, ամենաչքեղ երկաթուղիներ, ամենանշարագէտ գլուխներ, ամենաչքեղ երկաթուղիներ, ամենանշարագէտ մեքենագործարաններ. անշուշտ Անգլիան այս կողմից զիտելով բախտաւոր երկիր է, բայց Անգլիան գնակաւոր ժամանակ կարելի է մի այլ տեսակէտ ևս ունենալ և այս տեսակէտով կարող էր յիրաւի նորա բախտաւորութիւնից շատ աւելի գերակշիւ լինել գոյաբախտութիւնը: Անգլիան նաև այն երկիրն է, որտեղ թշուառութիւնը ծայրայեղութեան է հասցրած, որտեղ տարեկան հարիւրաւորներ սողում են լինում, որտեղ բանւորները յիստեն հազարներով

Այսպէս ուրեմն՝ հակառակ Բեյլերսներին, դե-Մանդելիններին, Իւնզերին, Townsend-ներին, դե-Տրասիներին ու Wakefield-ներին, որոնք կապիտալիստական կարգերի օրհներգու լինելով, ծարաւի են ժողովրդի թշուառութեան, — Նալբանդեանը դժգոհ է կապիտալիզմից, որովհետև սա հիմնուում է սևաբախտ ամբոխի աղքատութեան վրայ: Մինչդեռ բուրժուազիայի իդէոլոգի իգէալը հայրենի հարստութեան կուտակումն է, և նա ուշադրութիւն չէ դարձնում այս հարստութեան հաւասարապէս բաշխումելու վրայ, «Երկրագործութեան» հեղինակի աչքում, ընդհակառակը, հարստութիւնն

հրաժարում են բանւորաց, որովհետև չնայելով իրենց ներթուրեան ու տառապանքներին՝ այնքան չեն աշխատում, որ կարողանան անկարօտ ապրել: Անգլիան այն երկիրն է, որտեղ բարեկործութիւնն աղքատների հարկատուութեան միջոցով պէտք է դառնար օրէնք: Տեսնում էք սակայն դուք, քաղաքատնտեսներ, գործարաններում դողողուն, կորացած ու աճած, բայց թօշնած կերպարանները. տեսէք գունատ, ծիրուած, բարակացաւոր գէմքերը, տեսէք այս բոլոր հոգեկան ու մարմնական թշուառութիւնը, և դուք ուզում էք Գերմանիան դեռ մի երկրորդ Անգլիա դարձնել: Անգլիան միայն գոյաբախտութեամբ ու թշուառութեամբ կարողացաւ հասնել արգիւնաբերութեան այն բարձր կէտին, որի վրայ այժմ կանգնած է, և Գերմանիան կարող էր միայն միևնույն զոհաբերութիւններով նման հետեանքների հասնել, այսինքն հասնել այնպիսի դրութեան, որ հարուստներն՝ էլ աւելի հարուստ և աղքատներն էլ աւելի աղքատ դառնան». Н. Бельтовъ. «Къ вопросу о развитіи мѳнестическаго взгляда на исторію». СПб. 1906, եր. 52:



ինքնըստինքեան ոչ մի արժէք չունի, եթէ նա չէ հոսում գէպի գորշ մասսան:

Նալբանդեանը գիտէ, որ ոգորմութիւնն ու բարեգործութիւնը չեն կարող ամօքել այն թշուառութիւնները, որոնք արգիւնք են հասարակական յարաբերութիւնների, տիրող տնտեսական պայմանների:

«Մտռի տերևի վրայ ջուր թափելը արմատի չորութեան չէ օգնում. տերևքը ստանում են մի բուսական զովութիւն և այսչափ միայն»: \*)

Ուրեմն անհրաժեշտ է կապիտալիստական տնտեսութիւնը հիմնովին փոփոխել, ստեղծել այնպիսի կարգեր, որտեղ հասարակ ժողովուրդը բարօր վիճակի մէջ լինի:

Կապիտալիստական տնտեսութիւնը շատ քննադատներ է ունեցել: Սրանցից ոմանք, այս տնտեսութեան թերութիւններն ընդգծելով, մատնանիշ են եղել հասարակական այնպիսի կազմակերպութեան վրայ, որը պահպանում է խոշոր տնտեսութեան, արտադրական կօօպերացիայի հիմքերը և վերացնում է մասնաւոր սեփականութեան ու մրցման պատճառած չարիքները: Բայց եղել են և կան կապիտալի այնպիսի քննադատներ, որոնք այս տնտեսութեան թերի կողմերն երևան հանելով՝ իբրև իդէալ քարոզել են այնպիսի կարգեր, որոնք գոյութիւն ունէին նախկապիտալիստական կամ Ֆէոդալական շրջանում:

Կապիտալիզմի ո՞ր քննադատների թուին է պատկանում Միքայէլ Նալբանդեանը: Սրգեօք սոցիալիստ

\*) Մ. Նալբանդեանի երկերը, Բ., եր. 311:

է, թէ այնպիսի ինդիւիդուալիստ, որը կապիտալիզմի հակառակորդ լինելով հանդերձ շատազով է նախակապիտալիստական մասնաւոր սեփականութեան: Սրգեօք երազում է նա Աւետեաց երկրի մասին, թէ կարօտով յիշում է Եգիպտոսի սոխն ու սխտորը:

Վ.

Այն հարցումին, թէ «ի՞նչ աղբիւրներից կարող է հանել հասարակ ժողովուրդը իւր, չասէնք հարըստութիւնը, այլ ապրուստը, և ապրուստ «հաւաստի, մշանջեհական և ոչ առօրեայ», — Նալբանդեանը պատասխանում է.

«Հասարակ ժողովրդի համար ուղղակի և ֆնացած մասի համար անուղղակի, բայց և անհրաժեշտ, ինչպէս ջուրը ձուկի համար, ... միակ աղբիւր ապրուստի և հարստութեան է երկրագործութիւնը: Երբ որ մի ազգ կազմող անհատների մեծագոյն մասը պարապի երկրագործութեամբ և առհասարակ գիւղական տնտեսութեամբ, այն ժամանակ այդ ազգի ընդհանրութիւնը հարուստ է և ապահովեալ, որովհետև նրա հիմքը դրուած է բնականապէս և բնութեան վրայ»: \*)

Պէտք է իմանալ, որ Նալբանդեանը երկրագործութիւնն ասելով չէ հասկանում երկրագործական կապիտալիստական տնտեսութիւնը: Վերջինս նոյնպէս, ինչպէս գործարանային արդիւնաբերութիւնը, հիմնւում է բանուորի շահագործման վրայ, և ուրեմն սրա գոյութեան համար էլ անհրաժեշտ է պրոլետարիատի գոյութիւնը: Իսկ հայ նրապարակախօսը հէնց

\*) Նոյնը, եր. 313:



այս դասակարգը վերացնելու համար է, որ առաջարկում է երկրագործութիւնը որպէս ուղիղ ճանապարհ դէպի տնտեսապէս աւելի բարձր մի վիճակ: Նրա քարոզած երկրագործութիւնը մասնը գիւղացիական երկրագործութիւնն է, որ հիմնուում է սեփական, այլ ոչ բանուորի, աշխատանքի վրայ:

Հեղինակը կապիտալիստական տնտեսութիւնը համարում է երկրագործութեան անկման հետեանք:

«Անգլիական ազգի այսքան նարսափելի մեծութեամբ վաճառականութիւնքը, ձեռագործութիւնքը (մանուֆակտուրա. Թ. Ս.), որ այսօր գրեթէ դարձել են նրա բնաւորութեան յատկութիւնքը, ամենեւին պատահական չեն, այլ յառաջանում են նորանից, որ հասարակ ժողովուրդը հող չունի: Որովհետև բնականը չկայ, հարկն ստիպում է արհեստականով լցնել նորա պակասը»: \*)

Ուրեմն, եթէ հասարակ ժողովուրդը հող ունենայ, ապա այլ ևս ստիպուած չի լինել իւր գոյութիւնը կապելու ժապաւէնի ու այլոց հետ: Ժամանակակից սոցիալական մեծ խնդիրը հողային խնդիր է, և եթէ հասարակ ժողովուրդը հող ունենայ, ապա լուծուած կլինի սոցիալական խնդիրը: Այսպիսով՝ բանուորութիւնը դէպի գիւղ, դէպի երկրագործութիւն կոչողի առաջ ծառանում է այս հարցը, թէ ինչպէս պէտք է լուծել հողային խնդիրը. այն է՝ սրտեղից կարելի է հող ճարել հասարակ ժողովրդի

\*) Նոյնը, եր. 316:

համար և երկրորդ՝ ինչ միջոցներ գործադրելով կարելի է երաշխաւորել, թէ յետագայում, ազգաբնակութեան բազմանալու դէպքում, անհող մասսա չի գոյանալ: Այս հարցերի պատասխանը կտանանք, եթէ իմանանք, թէ ինչն է պատճառը, որ հողային խնդիրը, ուրեմն և տնտեսական հարցը այսքան սուր կերպարանք է ստացել: Սրա պատճառը, Նալբանդեանի կարծիքով, հողի մասնաւոր սեփականութիւնն է:

«Բնակալութիւնը, որ նոյն է, թէ աւագակութիւն, վաճառել է քեզ հասարակաց ազգի սեփականութիւնը: Ոչ նա իրաւունք ունէր վաճառելու և ոչ դու իրաւունք ունէիր գնելու. նա գող է և դու գողակից, որովհետև երկրագունդը անհատի սեփականութիւն չէ. նորա վերայ ապրում են և պիտի ապրեն բոլոր նորա որդիքը անխտիր: . . . \*) Բաժին տուր ինձ քո հողից, այն ժամանակ ես չեմ աշխատելու բռնի. ես կզգամ ինձ՝ ազատ, մեր իրաւունքները կհաւասարուին և ճշգրիտ եղբայրութիւնը երևան կելնէ»: \*\*)

Հողի անազատութիւնը պատճառ է հասարակական թշուառութեան. հողի ազատութիւնը պատճառ կդառնայ ժողովրդի իսկական ազատութեան: Հողն ընդմիշտ «ազատելու» միակ միջոցը մնում է հողի մասնաւոր սեփականութիւնը վերացնել և այն յատկացնել ընդհանրութեանը:

«Այն, փորձերը ուսուցին ի վերջոյ և, ապրուստի կարօտութիւնը ստիպում է մի փոքր խելացի լինել:

\*) Նոյնը, եր. 325:

\*\*) Նոյնը, եր. 324:



Հողը պատկանում է հասարակութեան, որի ամեն մի անդամը հաւասար իրաւունք ունի հաւասար քանակութեան վերայ յաւիտեանս ժամանակների և մի կողմից վաճառելու իրաւունք չունենալով, իսկ միւս կողմից հողը գործելու և արդիւնաւորելու իրաւունքը անկապտելի պահելով այդ հասարակութեան անդամը և նորա սերունդը հաստատում է իւր կեանքը մի ամուր և ապահով հիմքի վերայ և անհնար է, որ նա կամ աղքատութեան հանդիպի և կամ իսպառ կարօտ մնայ): \*

Հողի ընդհանրացումով լուծւում է հողային խընդիրը: Բայց ի՞նչպէս պէտք է հողն ընդհանրացնել. ո՞ւմ պէտք է յատկացնել հողի սեփականութիւնը. ամբողջ ժողովրդին (նացիոնալիզացիա), շրջանի ազգաբնակութեան (մունիցիպալիզացիա), թէ համայնքներին (սոցիալիզացիա): Հետեւեալ հատուածը պարզում է, որ Նալբանդեանը կողմնակից է հողի համայնացման:

«Էւրաքանչիւր քաղաք, իւրաքանչիւր գեղ պիտի ունենայ իւր յատուկ հողը, որ պիտի սեփական մնայ քաղաքի կամ գեղի հասարակութեան: \*\*»

Հարկաւոր չէ շփոթել երկու տարբեր գաղափարներ. հողի համայնացումն ու հողի համայնական մշակութիւնը: Նալբանդեանն ընդունելով առաջինը ժխտում է վերջինը: Նրա քարոզած կարգերում համայնական հողի վրայ հասարակութեան իւրաքանչիւր

\*) Նոյնը, եր. 319:  
\*\*) Նոյնը, եր. 318:

անդամը վարում է անկախ անտեսութիւն: Հետեւեալ սողերը կցրեն այս մասին ամեն կասկած:

«Գեղի ու քաղաքի իւրաքանչիւր անդամը հաւասար չափով իրաւունք պիտի ունենայ մի որոշեալ քանակութիւն հողի մշակելու և գործելու: Եւ այս իրաւունքը պիտի աւելնայ քան, որքան նա կամ նորա սերունդը պիտի բնակուի այն հողի վերայ: \*)»

«Երկրագործութեան» հեղինակը հողի համայնացում քարոզելով չէ դառնում սոցիալիստ, որովհետեւ նա մասնաւոր արտադրութիւն դաւանող է և միւս բոլոր բարիքները մասնաւոր սեփականութեան կողմնակից: Հայ հրապարակախօսը ինդիւիւզուալիստ է: Նրա իզէալն է ոչ թէ հասարակական այն կազմը, որտեղ գոյութիւն ունի միմիայն ընկերական բաշխում, այլ այն, որտեղ իշխում են ապրանքային արտադրութիւնն ու փոխանակութիւնը:

«Սեպհականութիւնը այն բանի, — ամփոփում է Նալբանդեանը իւր սոցիալական դաւանանքը, — որ առանց մեր աշխատութեան բնութիւնը դնում է մեր առջև, գողութիւն է, աւազակութիւն է և յափշտակութիւն, եթէ մինը առնու հարիւրաւոր, իսկ միւսը ամենակին ոչինչ: Այլ խնդիր է աշխատութեամբ ձեռք բերուած այն բանը, որ բնութիւնը չէ պահում իւր գողում, որ բնութիւնը չէ պատրաստում անմիջապէս, որ մարդը արուեստական ճանապարհով է պատրաստել և ի վերջոյ որի արժէքը պայմանական է,

\*) Նոյնը, եր. 318:



մի խօսքով՝ դրամը, որ մարդը վաստկել է: Բայց հողը նա չէ վաստկել, հողը նա չէ շինել, հողը բնութեանն է»: \*)

\*) Նոյնը, Եր. 324: Յոյց տալու համար, թէ ինչպէս Ռուսիայում անցնալ գարի 60-ական թուականներին օղբ առգորուած էր նման գազափարներով, մէջ ենք բերում Ն. Օգարին «Մարդկային հօտի բարեկարգութեան» մասին յօդուածի հետեւալ կտորը. «Вы видите, братья, что корень всего зла, корень всей розни сословной, поземельная собственность. Пока земля не будет признана достояниемъ народнымъ, достояниемъ земства, достояниемъ общимъ—царство любви и природы не возможно. Пророкъ Давидъ говоритъ: «Небо небесе—Господеви, землю же даде сыновомъ челоувѣческимъ.» Да и здравый смыслъ говоритъ, что отнять у когонибудь да отдать другому право на воздухъ, необходимый для дыханія, право на воду напоящую, право на землю родящую нужное, для пиши жительствова, грѣшно и бессмысленно, и послѣдствія такого неправильнаго права, не могли не быть ложными и гибельными. Челоувѣкъ отдѣльно имѣетъ право на созданіе руекъ своихъ, а то, что дано «сыновьямъ челоувѣческимъ» на то они имѣютъ право только сообща, братски разсчитываясь, сколько по числу душъ каждому изъ общаго достоянія приходится» Քաղում ենք Շ. Վѣтринскій. «Герценъ». С. П. Б. 1908, Եր. 364: Սիալ կլինի կարծել, որ Նալբանդեանն արտադրում է Օգարին յօդուածը, որովհետեւ Նալբանդեանի «Երկրագործութեան» առաջաբանի տակ նշանակուած է 1862 թ. մարտի 26, մինչդեռ Օգարին յօդուածը տպագրուել է Հերցենի Կոլոկոլ-ին կից հրատարակուող «Общее Вѣче» անունով թերթիկի մէջ, որ սկսել է հրատարակուել նոյն թուի յունիսի 15-ից:

Թէև հեղինակը հատուածի վերջում խօսքը մասնաւորում է միայն փողի մասին, այնուամենայնիւ միւս առգերից ակնյայտ է, որ լրացի հողից ամեն ինչ մասնաւոր սեփականութեան շրջանակի մէջ է մտցնում, ամեն ինչ, որ մարդը խորուետական ճանապարհով է պատրաստել: Այսպիսով հեղինակի ինքիւղուալիզմը կասկածի ենթարկող ոչ մի նշան չէ մնում այլ ես:

Նալբանդեանը ձգտում է ստեղծելու ճիշտ այնպիսի գրութիւն, ինչ որ գոյութիւն ունէր գաղութներում և որի դէմ բողոքում էին կապիտալիզմի ջատագով Wakefield-ները: Հայ հրատարակախօսի ի դէպն է վերացնել սեփականագրկութիւնը, պրոլետարիատը, հետեւաբար և կապիտալիզմը. նա ճգնում է սրանց փոխարէն պաշտպանել անձնական աշխատանքի վրայ հիմնուած սեփականութիւնը, մանր արտադրութիւնը: Նա ջատագով է քրտնավաստակ գիւղացիութեան ընդդէմ մակաբոյծ բուրժուազիայի: Նրա դրօշակի վրայ գրուած է արդար աշխատանք և ոչ վատթար շահագործում: \*)

\*) Մոլորութիւն կլինի Նալբանդեանի աշխարհայեացքը ֆիզիկրատների ուսմունքին նմանեցնելը, որովհետեւ նախ Նալբանդեանը հողի համայնացման կողմնակից է, իսկ ֆիզիկրատները հողի մասնաւոր սեփականութեան ջերմ պաշտպան, և երկրորդ, որ զլխաւորն է, հայ հրատարակախօսը մանր գիւղացիական, անբանուոր տնտեսութեան ի դէպի է, մինչդեռ ֆիզիկրատները, Կենէն ու աշակերտները, երկրագործական



VI.

Հողային հարցը անտեսական կարիքների պատճառ համարելն ու առաջինի լուծումով վերջինները վերացնելու միտքը յատուկ չէ միայն XVIII ու XIX դարերին: Տնտեսութեան ու հասարակական հոսանքների պատմութիւնը ցոյց է տալիս, որ ամեն

պրոլետարիատին շահագործող բուրժուազիայի —կապիտալիստ ֆերմեր գասակարգի գաղափարախօսները «Կենդի համար—գրում է Կ. Մարքսը, —երկրագործութիւնը մարդկային աշխատանքը գործադրելու միակ ասպարէզն է. որ յաւելեալ արժէք է արտադրում, այսինքն աշխատանքի միակ ասպարէզն է, որ իրականապէս կապիտալիստի տեսակէտից արտադրող յատկութիւն ունի: ... Ֆրիդրիքսների սիտեմը կապիտալիստական արտադրութեան առաջին սիտեմատիկ ըմբռնումն է: Արգիւն արեւական կապիտալի ներկայացուցիչը, ֆերմեր գասակարգը, ամբողջ անտեսութեան դեկավարն է: Երկրագործութիւնը վարում են կապիտալիստօրէն, այսինքն իրրե կապիտալիստ ֆերմերի խոշոր ձեռնարկութիւն. հողն անմիջապէս մշակողը վարձու բանուորն է: ... Արտադրութեան գրքը գաղափարաւոր յաւելեալ արժէք ձեռք բերելն է: Марсьс. «Капиталь.» т. II. пер. Базарова и Степанова, Москва, 1907, кр. 330:

Սխալ է նոյնպէս Նալբանդեանի ու Չերնիշևսկու դաւանանքները նոյնացնելը, որովհետեւ, ինչպէս ասացինք, «Երկրագործութեան» հեղինակը ինդիւլիդուալիստ է, մինչդեռ ուսանողս առաջադէտը՝ ուսուցիական սոցիալիզմի ահանաւոր ներկայացուցիչն էրից մէկը: Հմտ. Գ. В. Плехановъ. «Н. Г. Чернышевский» СПб, 1910.

անգամ, երբ ստորին դասակարգերի դրութիւնը վատացել է, հանդէս են եկել մարդիկ, որոնք երկրագործութիւնը շատագու՛ վելով, չքաւորներին հողաբաժիններ յատկացնել առջարկելով, իսկ աւելի համարձակները նոյն իսկ հողի ընդհանրացում քարոզելով մտածել են հասարակութեան սոցիալական վերքերը բուժել: Յիշենք մի երկուօրինակ դանազան դարերից, որոնք մեր հայեացքներին հորիզոնն ընդարձակելով կնպաստեն աւելի ճիշտ գաղափար կազմելու մեզ զբաղեցնող խնդիրների մասին:

Դեռ ևս Արեւելքում մեզանից մօտ 2500 տարի առաջ Եսայի մարգարէն բողոքում էր մեծ հողատէրերին դէմ, որոնք մեծ ձկների պէս կուլ էին տալիս իրենցից փոքրերին, և պատճառ դառնում անհող մասսայի առաջնալուսն:

«Վա՛յ յայնոցիկ, որք յարեն գտուն իտուն և գագարակ առագարակ մեր ձեցուցանեն, զի զընկերին հանիցեն. միթէ միմյն բնակելոց իցէք յերկրի»: \*)

Թալմուդիստները զիտակցում էին, որ մանր արտադրող զիւղացու համար երկրագործութիւնից աւելի նպաստաւոր զբաղմունք չկայ և որ անտեսութեան այլ ձիւղերի զարգացումը զիւղացի դասակարգին անկումն է պատրաստում: Բաբբի Պապան ուսուցանում էր.

\*) Մարգարէութիւն Եսայիայ, Գլ. Ե, 8:



«Մշակիք հողդ և մի գբադուրը առու-  
տուրով»: \*)

Պահպանողական, բայց խելօք բարբին նախա-  
տեսում էր, թէ ինչ սոսկալի պատուհաս է գիւղա-  
ցիութեան համար փողային աշտեսութիւնը:

Անցնելով Արևմուտք նկատում ենք, որ այստեղ  
էլ անտեսական խնդիրը գլխաւորապէս հողային հարցի  
շուրջն է պատուում: Յունական դեմոկրատիայի՝ մի  
քանի դար շարունակ կրկնուող ապստամբութիւնների  
ժամանակ անընդհատ լսում ենք «հողերի բաժանում»  
նշանաբանը, որ և մերթ ընդ մերթ փոխուում է հողի  
ընդհանրացման հրաւէրի: Աթէնքում, Կերկիրայում,  
Սամոսում, Արգոսում, Մեգարայում, Կիմէյում, Լե-  
ոնախնում, Սիրակուզայում, Դելոսում, Պերգամում  
ու մանաւանդ Սպարտայում կատարուած յեղափո-  
խութիւնների հետևանքը յաճախ եղել է հողերի բա-  
ժանումն ու կամ ընդհանրացումը: Թէ յոյն ամբողջի  
շարժումների ժամանակ որքան մեծ դեր էր խաղում  
հողային հարցը, վկայում է Ելլադայի մեծ փիլիսո-  
փան—Պլատոնը:

«Յաճախ,—ասում է նա,—փորձում են սե-  
փականութեան որոշ հաւասարութիւն սահ-  
մանել տատանելով հողային սեփականու-  
թիւնն ու ոչնչացնելով պարտքերը և զիտակցելով,  
որ առանց այս միջոցների չէ կարելի բաւարար չա-  
փով հաւասարութիւն իրականացնել»: \*\*)

\*) В. Святловскій. «Очерки по истории политической  
экономіи», Կր. 76:

\*\*) Р. Пёльманъ. «Исторія античнаго коммунизма и  
соціализма», Կր. 449:

Իսկ Ապենինեան թերակղզում, որտեղ դասա-  
կարգային առելութիւնն եռում է լաւայի պէս, որ-  
տեղ սեփականագուրկ ու կատարած մասսան իւր եղ-  
ջիւրների վրայ առած ցնցում ու սարսափ է ազդում  
երկրաստան Հռովմին, այնտեղ կոչը դէպի հողը  
պարզ լսում է սնանկ պլեբսի ու սնանկ պրուլետա-  
րիատի առաջնորդների, դեմագոգների ճառերում:

«Մինչև անգամ անտառի գազանները, — գոչում  
է դառնութեամբ ագնիւ Տիրերիոս Գրակքոսը, — ու-  
նեն իրենց որջերը, իսկ այն քաղաքացիք, որոնք  
կուում են տէրութեան պատուի ու փառքի համար,  
չգիտեն, թէ որտեղ դնեն գլուխները: Նրանց ոչինչ  
չի մնացել բացի օդից ու լոյսից: Նրանք ստիպուած  
են առանց ապաստանի թափառել ընտանիքների հետ:  
Միթէ անամօթ կեղծաւորութիւն չէ, որ կոնսուլ-  
ները ճակատամարտից առաջ համարձակուում են ա-  
սելու մարդկանց, որ նրանք կուում են ընտանեկան  
յարկի, սրբութեան սեղանի ու նախնիների շիրիմների  
համար: Որովհետև ռրտեղ է նրանց յարկը, սրբու-  
թեան սեղանը ու նախնիների շիրիմները: Նրանք  
պէտք է իրենց արիւնը թափեն ու մեռնեն ոչ թէ  
հայրենիքի, այլ նրա համար, որ ուրիշները խեղդուեն  
պերճութեան մէջ և հարստանան: Եւ այն մարդիկ,  
որոնք տիեզերքի տէրեր են կոչուում, մի  
կտոր սեփական հող չունեն»: \*)

Նոյն իսկ ընդհանուր պատմութեան դասադրքե-  
րից յայտնի է, թէ հողային հարցը Հռոմում ինչ մեծ

\*) Р. Пёльманъ, Կր. 563:



կոիւնների պատճառ դարձաւ, կոիւններ, որոնց ժամանակ ժողովրդի շահերի պաշտպան գեմագոգների պահանջն էր բաժին հանել աղքատ գիւղացիութեանն ու պրոլետարներին այն հսկայական կալուածներին, որ ունէր տիրոջ դասակարգը: \*)

Նոր դարի սկիզբներում, երբ սոցիալական խնդիրները շուրջը քաղաքական կուսակցութիւններ գեռեալ չէին կազմուել և դասակարգերի անտեսական պահանջներն անգամ կրօնական պայքարի կերպարանքով էին հանգէս գալիս, հողը մասնաւոր սեփականութիւնից ազատելու կողմնակից էին քրիստոնէական մի քանի աղանդներ:

«Մենք բոլորս եղբայրներ ենք,—քարոզում էին անաբապտիստներն ու գիւղացիական մեծ ապստամբութեան մասնակիցները XVII դարում,—և մեր ընդհանուրիս հայրը Ադամն է: Ո՞րտեղից է կոչումները ու հարստութեան այս մեծ տարբերութիւնը, որտեղից է այս մեծ անդունդը, որ ստեղծել է բռնակալութիւնն և գրել մեր ու աշխարհիս հոգրները միջև: Ի՞նչու մենք անքանք աղքատութիւնից և մաշուենք աշխատանքից, մինչդեռ ուրիշները թաղուած են վայելքների մէջ: Մի՞թէ մենք բարիքների հաւասարութեան իրաւունք չունենք, բա-

\*) Յոյն-հատվական ամբոխի շարժումների ու իդէալների մասին մեծարժէք փաստեր է ապրիս Պետրմանի յիշեալ գիրքը, սակայն հեղինակի աշխարհայեացքն ու շատ կզրակացութիւնները մերժելի են:

րիքների, որոնք հէնց բնութիւնից ստեղծուած են բոլոր մարդկանց միջև հաւասարապէս բաժանուելու համար: Հողն ընդհանուրի սեփականութիւնն է, որի մէջ մենք էլ ունենք մեր մասը, որը սակայն խլել են մեզանից: Ե՞րբ ենք մենք զիջել մեր հայրական ժառանգութեան այս մասը: Թող ցոյց տան մեզ այն պայմանը, որ կապել ենք նրանց հետ: Տուէք ուրեմն մեզ, աշխարհիս հարուստներ, ազան գիշատիչներ, մեր ստացուածքը, որ անարգարութեամբ յափշտակել էք մեզանից. և դ՛ու, թշուառ հօտդ Քրիստոսի, մի՞թէ յաւիտեան պէտք է անքաս աշխարհիկ ու հոգևոր իշխանութիւնների լծի տակ ճնշուելով:» \*)

Հողի մասնաւոր սեփականութիւնը վերացնելու կուսակից էին նաև կրօնական մի ուրիշ աղանդի հետևորդներ էլ: Խօսքը Անգլիայի լեկլերները մասին է: Սրանք էլ հողային հարցի լուծմանը մեծ նշանակութիւն էին ապրիս: Սրանց կարծիքով երբ բոլորը հողի հաւասար բաժին ստանան, «այն ժամանակ չեն լինիլ ոչ աղքատներ և ոչ էլ ձրիակերներ»: Լեկլեր հեղինակներից մէկը, Չեմբերլենը, «Աղքատ մարդհեղինակներից մէկը, Չեմբերլենը, «Աղքատ մարդհեղինակներից մէկը, Չեմբերլենը, որ լոյս է տեսել 1649 թուին, թշուառութիւնները վերացնելու համար առաջարկում է հողն ազգայնացնել (նացիոնալիզացիա):\*\*) Մի ուրիշ լեկլեր հեղինակ, Չեմբերլենը, 1651 թուին հրատարակած «Ազա-

\*) В. СВЯТЛОВСКІЙ, стр. 231:  
\*\*) Նոյնը, стр. 255—256:



է հեղինակը,—ազգութիւնն է նոցա միակ դրօշը, որ կարող է բացուել բռնակալութեան ընդդէմ: Ազգութիւնն է միակ հնարը հդէմ դնելու նաև լուսաւոր բռնակալութեան, եթէ միայն բռնակալութիւնը կարող է լուսաւորուիլ կամ լուսաւորուելուց յետոյ յարատեւել իբրև բռնակալութիւն, կրկնում ենք մեր դարու երևելի մտածողներից մինի հետ»\*)

Այս հատուածը միանգամայն պատասխանելով մեր վերոգրեալ երկու հարցին պարզում է նախ, որ հայ հրապարակախօսի աշխարհահայեացքի մէջ դասակարգային կռուի յիշատակութիւն չկայ, և երկրորդ, որ նա յանուն ազգութեան պարզած դրօշի շուրջը կամենում է հաւաքել բոլոր նրանց, որոնք ձգտում են բարեկալութիւնը իրենց անտեսական դրութիւնը: Գասակարգային կռուի փոխարէն նա քարոզում է ազգային կռիւ: Սակայն նրա դաւանած ազգութիւնը շատ է տարբերում ուրիշների քարոզած ազգութիւնից: Մինչդեռ բազմաթիւ խաւարած ուղեգնների համար ազգութիւնը մի վերացական, ամեն հանգամանքներում գաւանելի գաղափար է, որին պէտք է ստորագասուեն միւս ամեն ձգտումները, Նալբանդեանի համար ազգութիւնը մի իդէա է, որ պէտք է ծառայէ հացի խնդրին:

Հայ հրապարակախօսի քարոզածը մատերիալիստական նացիոնալիզմն է, որն աչքի է ընկնում ժողովրդասիրական բնոյթով:

\*) Մ. Նալբանդեանի երկերը, Բ. հր. 372:

VIII.

Առաջին համակրելի կէտը Նալբանդեանի՝ ազգութեան վերաբերմամբ ունեցած հայեացքի մէջ այն է, որ նա հակառակ է բռնացող, յափշտակող ազգութեան: Հայ հրապարակախօսը ազգասէր լինելով հակառակ է ազգամոլութեան, որ խլում է ուրիշ ազգերից քաղաքական ու անտեսական իրաւունքները, զրկում է ապրուստի միջոցներից, յափշտակում է երկիրներ, տիրում է ազանութեամբ բազմաթիւ գաղութների և կեղծաւորութեամբ ազազակում, թէ այս բոլորը կատարում է քաղաքակրթութեան համար: Յարձակողական շովինիզմն ատելի է Նալբանդեանին:

«Վնասակար և անիրաւ է այնպիսի ազգութիւնը, որ ամեն ուրիշ զոհում է իւր կեանքին. ազգութիւն չէ այն, այլ կոյր ֆանատիկոսութիւն, որ հիմք չունի և կիրքի բնաւորութեամբ երեւում է մարդու մէջ: . . . \*) Հերիք է որչափ կոյր և ֆանատիկական ազգութիւնը ունի իւր եսական կողմերը. հերիք է ասում ենք, որ մի ազգութիւն իւր մի շամփուր խորովածի համար մորթում է միւս ազգութեան եզր. . . \*\*)»

Մինչդեռ ժամանակակից քաղաքակիրթ ազգերը ձգտում են հաւասար իրաւունքն իրականացնելու ազգի, հասարակութեան ներքին կեանքում, ներագալին շրջանում, Նալբանդեանը հաւասար իրաւունք քարոզում է նաև հասարակութիւնների միջև, միջազգային ասպարէզում: Բարոյական այն օրէնքը, որ

\*) Նոյնը, հր. 372:

\*\*) Նոյնը, հր. 361:



պատուիրում է, թէ «արն ուրիշներին այն, ինչ որ կկամենայիր անեն քեզ մարդիկ», և որը պարտադիր է համարում անհատական յարաբերութիւնների ժամանակ, հայ հրապարակախօսը պարտադիր է հռչակում նաև ազգային յարաբերութիւնների ժամանակ: Այս սկզբունքը կեղծ քրիստոնեաների նման չէ քարոզում միայն ևրոպական քաղաքակիրթ ազգերի, այլ և երկրագնդի խորթ զաւակները — կիսակիրթ ու վայրենի ժողովուրդների վերաբերմամբ էլ: Մպառազէն աշխարհակալութեան, գաղութային արիւնարբու քաղաքականութեան փոխարէն նա շատագուովում է ազգերի եղբայրութիւնը:

«Ազգութիւնը հարկաւոր է և օգտակար այն ժամանակ, երբ նա չէ բորբոքւում իբրև մի ընդհանրական կայծ, իբրև պատահական և հանգամանքներից կախուած մի բան, այլ երբ որպէս հետևանք հասուն գիտակցութեան հանդէս է գալիս այրական հաստատամտութեամբ, պահանջում է ուրիշների հաւասար իրաւունք և ոչինչ չէ խնդրում աւելի: . . . Ազգութիւնը անմեղադրելի է և ամենայն ընդունելութեան արժանի, եթէ նա խոստովանի միւս ուրիշ ազգութիւնքը անխտիր, նոյնպիսի իրաւանց ժառանգ, որպիսի ստացել է ինքը: Ազգութիւնը անմեղադրելի է և տօնելի իսկ, եթէ նա ընդհանուր մարդկութեան գործը թեթևացնել աշխատի իւր հաւաքական անձնաւորութեան անունով իրաւունք ձեռք բերելով և նոյն իրաւունքը և արտօնութիւնքը հաւասարապէս իւր անդամներին բաշխելով»: \*)

\*) Նոյնը, ևր. 372 - 373:

Տեսել ենք, որ «Երկրագործութեան» հեղինակի կարծիքով քաղաքական ազատութիւնն ինքնրստինքեան արժէք չունի հասարակութեան ներքին կեանքում. լոկ քաղաքական ազատութիւնով հասարակութեան անդամների մէջ եղբայրութիւնը թագաւորել չէ կարող, մինչև որ մարդիկ անտեսապէս ազատ չլինին. իսկական ազատութիւնը հիմնուած է հողի հաւասար իրաւունքի վրայ: Հայ հրապարակախօսը նոյնը քարոզում է նաև իւրաքանչիւր ազգութեան համար միջազգային կեանքում: Քաղաքական ազատութիւնն առանց անտեսական ազատութեան ոչ մի օգուտ չունի. ազատութեան հաստարանը, հիմքը հողն է, որ մարդը չէ ստեղծել, այլ բնութիւնը. ինչպէս որ անհատն իրաւունք չունի բռնանալու հողի մեծ քանակութեան վերայ, այնպէս էլ մի ազգ իրաւունք չունի տիրելու այնքան հողի, որ իւր կարիքներից աւելի լինի: Հաւասար իրաւունք մի կտոր հողի վրայ — ահա նալբանդեանի հաւատամքը թէ ներազգային կեանքում ու թէ միջազգային ասպարէզում, թէ անհատի ու թէ ազգի համար:

«Եթէ ազգութեան ներքին և էական խորհուրդը չէ անտեսական խնդիրը, անհիմն է այդ ազգութիւնը և կկործանուի: Տնտեսական խնդիրն է այն միակ և հաստատ ոյժը, որ ազգի անձնաւորութեան մէջ ներգործելով հաւասարակշիւ է պահում արտաքին ոյժերի ընդդէմ, որով և ազգութիւնը ապրում է: . . .

\*) Նոյնը, ևր. 373:



Ազգութիւնը հարկաւոր է և օգտակար այն ժամանակ, երբ զգալի է ոչ որպէս մի բարոյական շռայլութիւն, այլ որպէս կարիք, որպէս իրաւունք, որպէս բողոք երկրագունտի վրայ մի կտոր հող ձեռք բերելու համար, որպէս զի ազգութեան անդամքը ապահովեն իւրեանց ապրուստը, որպէս զի գերի և ստրուկ չլինեն ուրիշին»։ \*)

Սխալուած կլինենք, եթէ կարծենք, թէ Նալբանդեանը կողմնակից է ամեն ազգային ազատագրական շարժման, որ նպատակ ունի հող ձեռք բերելու ազգի համար։ Նա զգուշացնելով զգուշացնում է ճնշուած ազգերին, որ չլինի թէ ձեռք բերած հողը տէրութեան կամ ազնուականութեան սեփականութիւն դարձնեն։ Հայ հրապարակախօսը թշնամի է այն ազգային շարժման, որի նպատակը չէ ազգային հողի համայնացում։ Այն ազգային շարժումը, որը նպաստաւոր պայմաններ չէ ստեղծելու ժողովրդի ու մանր արտադրութեան համար, այն ազգային շարժումը, որի դրօշի վրայ չէ գրուած «հող գիւղացիներին», վնասակար է, որովհետեւ ձգտում է ստեղծելու մի նոր տեսակի, այն է՝ ազգային բռնակալութիւն։

«Այսօր եթէ մի ժողովուրդ ստրուկ է, եթէ նա հող չունի և եթէ յաջողի նրան հող ձեռք բերել, իրաւունքը և ժամանակը պահանջում են անօրինել այնպէս, ինչպէս ցոյց է տալիս հարկը, ինչպէս ցոյց

\*) Նոյնը, Կր. 373:

է տալիս բանականութիւնը և ոչ այնպէս, ինչպէս հին օրերից մնացած, աւանդական կառավարութիւնքը անօրինել են մինչև այժմ, այսինքն տէրութեան կամ ազնուականութեան սեպականելով հողը և հասարակ ժողովուրդը զրկելով իրաւունքից։ Վերջին դիպուածում ազգութիւնը ազատութիւն չէ ժողովրդին. նա փոխում է միայն նորա լուծը. մեք դրականապէս թշնամի ենք այդպիսի ազգութեան, ինչպէս թշնամի ենք բռնակալութեան, ուր և ինչ կերպով որ յայտնուի»։ \*)

Այսպիսով Նալբանդեանի համար անտեսական խնդիրը հողային խնդիր է, իսկ հողային հարցը ազգային հարց. և կամ, որ միևնոյն է, ընդհակառակը, ազգային խնդիրը անտեսական խնդիր է, իսկ անտեսական հարցն էլ հողային հարց։ Հայ հրապարակախօսի՝ ազգութեան մասին արտայայտած հայեացքը նպաստաւոր չէ ազգի շահագործող դասակարգերի համար, որովհետեւ ձգտում է ստեղծելու այնպիսի կարգեր, որ անհնարին դառնան յաւելեալ աշխատանքն ու յաւելեալ արժէքը։

Նալբանդեանի քարոզածը մատերիալիստական նացիոնալիզմն է. բայց նրա ջատագոված «ազգն» ու «նիւթը» սաստիկ տարբերում են ազնուական ու արդիւնաբերող դասակարգի «ազգից» ու «նիւթից»։ Նրա սիրած «ազգը» մանր, աշխատաւոր գիւղացիութիւնն է, իսկ նրա դաւանած «նիւթը»՝ համայնացրած հողը։

\*) Նոյնը, Կր. 374—375:



IX.

Մինչև այժմ ասածներէց դեռ չի երևացել, թէ Նալբանդեանն ինչ կարծիքներ է յայտնում մասնաւորապէս հայ կեանքի մասին: Ընդհանուրին վերաբերեալ խօսքերէց անշուշտ կարելի է եզրակացնել, թէ շատ կամ քիչ փոփոխութիւններով նոյնը պէտք է ասէ նաև հայ ժողովրդի մասին գատելիս, սակայն այն հանգամանքը, որ հայ ժողովրդի անտեսական դրութիւնը շատ էր տարբերում Արևմտեան Եւրոպայի անտեսական դրութիւնից, ստիպում է յատկապէս զբաղուելու նաև այն մտքերով, որոնք վերաբերում են Հայոց աշխարհին:

Նալբանդեանի ժամանակ Արևմտեան Եւրոպայի մի քանի երկիրներում կապիտալիզմը լիակատար ծաղկման մէջ էր, օրինակ՝ Անգլիայում, Ֆրանսիայում, իսկ տեղ տեղ էլ նոր էր յաղթանակում, օրինակ՝ Գերմանիայում: Այս երկիրներում արդէն լիովին կազմակերպուել էին և կամ կազմակերպուում էին կապիտալիստական անտեսութեան երեք գլխաւոր դասակարգերը. հողատէրերը, կապիտալիստներն ու բանուորութիւնը: Հասարակական միւս խմբերի մնացորդները, գիւղացիութիւնը, արհեստաւորութիւնը, մանր վաճառականութիւնը ևլն, ինչպէս խարխուլ պատեր կամաց կամաց փուլ էին գալիս ու լուծւում նոր անտեսութեան կատաղի յորձանքների մէջ: Արգիւնաբերութիւնը քաղաքում կուլ էր տալիս արհեստաւորին, իսկ գիւղում՝ երկրագործին: Բանողի սեփական աշխատանքի վրայ հիմնուած անտեսու-

թիւնը, այսինքն մանր արտադրութիւնը, հոգեվարքի մէջ էր:

Հայոց աշխարհի բոլոր բաժիններում, ի միջի այլոց նաև Տաճկահայաստանում, որը Նալբանդեանի հոգսերի միակ առարկան է «Երկրագործութեան» մէջ, այս տեսարանի կատարեալ հակապատկերն էր իշխում: Հասարակական կազմն հիմնւում էր մանր արտադրութեան վրայ, ազգաբնակչութեան հսկայ մեծամասնութիւնը կազմուած էր գիւղացիներից ու արհեստաւորներից: Բոլորովին չկար արգիւնաբերութիւն երկու անհրաժեշտ դասակարգերով. չկային կապիտալիստներ ու գործարանային բանուորութիւն: Բուն երկրում շատ չնչին տոկոս էին կազմում առևտրականները, որոնք համեմատաբար աւելի բազմաթիւ էին գաղթավայրերում: Ազգաբնակչութեանը, մանաւանդ գիւղացիներին, սաստիկ ճնշում էին պետական հարկերը. պաշտօնեաների կեղեքումներն ու աւագահաբարոյ ցեղերի յարձակումները: Ներքին շարիքներից գլխաւորը վաշխաւորութիւնն էր, որը սակայն դեռ ևս չէր գրաւում տաճկահայի վիճակով հետաքրքրուող հեղինակների ուշադրութիւնը:

Այն ժամանակ, երբ Նալբանդեանը գրում էր «Երկրագործութիւնը» (1862 թ.) Տաճկահայաստանում աիրում էին մօտաւորապէս այնպիսի կարգեր, որոնք հեղինակի ցանկացածն էին. այստեղ իշխում էր մանր արտադրութիւնը, որ նրա կարծիքով միակ ուղիղ ճանապարհն էր չքաւորութիւնից դուրս գալու համար: Սակայն և այնպէս հայ հրապարակախօսը շատ մուսյլ գոյներով է նկարում տաճկահայի



դաքներում կենտրոնանալուն նա հակառակ կլինէր նաև այն դէպքում, եթէ տաճկահայը զնար ոչ թէ հայրենիքից դուրս գտնուած կենդրոնները, այլ բուն երկրի քաղաքները: Հեղինակը դէմ է պանդխտու-

ստրուկը: Կան գիւղացիներ, որոնք յանկարծական պիտոյքի համար ծախում են իւրեանց ցանածի, աչնցանի կամ գարնցանի կանաչը, որովհետև այդ կանաչների արգիւնքը ակնհերս չէ, քաղաքացիք ամենաչնչին գներով տէր են դառնում գիւղացու քրտանց արգիւնքին: Երբ գիւղացին որեէ կերպ վտանգուում է, օրինակ եթէ գողանում, յափշտակում են նորա եղները, անասունները, կամ վարակիչ հիւանդութիւններից ստաակում են, եթէ այրում են նորա գէզը և մարազը, եթէ երաշտից, մորեխից, մկներից ոչնչանում է նորա ցանքը, այսպիսի հազար մի տեսակ հանգամանքներին ենթարկուած գիւղացին, փոխատու ընկերութիւններ չլինելուց, վերականգնելու մտօք զիմում է վաշխատուին, զնում է նրա ոտի տակ իւր տունը, տեղը, կայքը, հողի սեփականութեան իրաւունքը և ստանում է ցանկացած փոխը այնպիսի պայմաններով և տոկոսով, որ երբէք չի կարողանալու հատուցանել ու այսպիսով գիւղական ընտանիքներ կործանում են անկանդնելի կերպով: Որքան որ գիւղերը աւելի մօտ են քաղաքին, այդ չափով էլ աւելի խիստ են թարկուած ևն քաղաքացոյց հարստահարութեանց և աւելի շատ աղքատ են: Օրինակ, Վանայ չրջապատի Թեմար անունով գաւառը և Ռչտունեաց գաւառի հիւսիսային մասը Վաստուրականի բոլոր գաւառներումը ամենախիստ կերպով հարստահարուած, ամենից սաստիկ վտանգուած աղքատներն են, զրանցից է կազմուած Վանեցի մշակների մեծամասնութիւնը:... Այժմ գիւղացին երբ որ վտանգուում է անարգար կառավարութեան կաշառակեր պաշտօնեաներից, քրդերի յափշտակասիրութիւնից, նա զիմում է իւր

թեան ոչ այն պատճառով, որ սա աշխարհագրական տեղափոխութիւն է, այլ որ սրա հետ կապուած է ժողովրդի գլխաւոր զբաղմունքի փոփոխութիւնը: Երկրագործ մասսան երկու ծայրից քայքայւում է. մի մասը դառնում է սեփականագուրկ վարձուոր, իսկ միւս մասը դիմում է դէպի առևտուրը: Թէև տաճկահայերի մեծամասնութիւնը դեռ ևս կազմ է հողին, բայց և այնպէս անտեսական զարգացման այս տեսչենցիան — վարձկան մշակութեան ու վաճառականութեան զարգացումը օրհասական հետևանքներ կարող է ունենալ:

«Այն աշխարհներում, ուր հասարակ ժողովուրդը հող չունի, ուր չէ կարող երկրագործութեամբ ապրել, նա կենդրոնանում է քաղաքներում և մայրաքաղաքներում և այս կենդրոնացութեան չափով սաստկանում է և... աղքատութիւնը: Եթէ այսպէս

կարող ազգակցի օգնութեան, իսկ այդ արեւակից կեղծաւորը քաղցր խօսքերով տիրում է նորա ստացուածքին, դնում է նորա վզին յաւիտենական սարկութեան տառատոկը... Գիւղացին տէրութեան պաշտօնեաների հարստահարութեան տակ հեծում է, քրդերի հարստահարութեան տակ տրտնջում, բողոքում է, հարստահարող ազգակցի հարստահարութեան տակ անմուռն զոհի պէս ոչնչանում է: Այսպէս են փոխակերպուում համեստ երկրագործ ընտանիքներին օրահացին կարօտ մշակները:» Ա. Թոմմախեան, «Մասիս լեռների հարաւային ստորոտներ», մասն Բ, Թիֆլիս, 1882, կր. 14—16 ու 22:



է հասարակ ժողովուրդի վիճակը մի այնպիսի աշխարհում, որ բոլոր երկրագնդին բաժանում է իւր ձեռագործքը, որ պէտք ունի միլիոնաւոր ձեռքերի (ախարհում է Անգլիային. Թ. Ա.), ինչպէս ուրեմն կլինի այն աշխարհների վիճակը, ուր անգլիական արուեստի և ձեռագործութեան և հագարերորդ մասը չկայ, և եթէ այս աշխարհների հասարակ ժողովուրդը թողու իւր հողը և երթայ մայրաքաղաք կամ այլ գաւառական քաղաքներ: Ասել հարկաւոր չէ, քանզի մինչև այստեղ ասածներինցս հետևեցելը շատ հեշտ է»: \*)

Հանրածանօթ է Նալբանդեանի սրտաշարժ նկարագրութիւնը, որի մէջ պատկերացնում է, թէ ինչպէս մշակը լիբրե գրաստ, իբրև մեքենայ ծառայելով արտասուելի օտարութեան մէջ տան քսան տարի կամ մեռանում է այն տեղ՝ թողնելով իւր ընտանիքը ծայրացեալ թշուառութեան մէջ և կամ վերադառնում է գէպի իւր երկիրը . . . հասակն առած, ուժաթափ և թօշնած, վերադառնում է նա միմիայն իւր ներկայութեամբ իւր, աղքատ ու կարօտ ընտանեաց թիւը յաւելցնելու համար»: \*\*)

«Սոցա վիճակից աւելի քաղցր չէ այն մանր վաճառականների վիճակը, որ նոյնպէս լքանելով իւրեանց երկիրը ձեռք են զարկում վաճառականութեան պանդխտանալով օտար աշխարհում: Նոցա կեանքի շաւիղի վրայ ևս չկան ծաղիկներ և վարդեր,

\*) Մ. Նալբանդեանի երկիրը: Բ. եր. 334—335:

\*\*) Նոյնը, եր. 340—341:

ամենայն քայլափոխ փոշուր և տատանակ: . . . Նա բոլորովին մեքենայացած մանում է իւր կեանքի թելը, նորան չէ գլուկ մի հրապուրիչ լոյս, նա չէ տեսնում իւր ապագայի հորիզոնի վրայ մի երջանկութեան աստղ. նորա ներկան ու ապագան խաւար է: Նա տանում է իւր կեանքի ծանր խաչը, մինչև որ մի նիւթեղէն խաչ անկուրի նորա գերեզմանի վրայ»: \*)

«Ազգը,—ամփոփում է դառնութեամբ հայ հրապարակախօսը,— . . . փորձեց մինչև այժմ վաճառականութիւնը, նա փորձեց վարձկանութիւնը և մշակութիւնը. սոցանից հետևեցաւ նորա կեանքի աւերանքը, որի տակ այսօր ձնշուկ է միջաբեկ»: \*\*)

Նալբանդեանը զգուշացնում է հայ ժողովրդին վարձկան մշակութեան Խաբիբ գայից ու վաճառականութեան Սցիլլայից, որոնք շատ ու շատ ընտանիքների մարելու պատճառ են դարձել, որով և փաստել են հասարակական շինուածքին: Հայ ժողովրդի փոշուրութիւնը, ինչպէս և ուրիշներինը, հայ հրապարակախօսը տեսնում է դարձեալ հողի ու երկրագործութեան մէջ: Հեռու քաղաքից, վերադարձ գէպի գիւղ,—նորից հնչում է հայ Գրակքօսի հրաւերը:

XI.

«Մինչև ազգը . . . չկատարէ մի տնտեսական յեղափոխութիւն մինչև այսօր բռնած իւր ընթացքի

\*) Նոյնը, եր. 342:

\*\*) Նոյնը, եր. 343:



մէջ և մինչև չդիմէ բնութեան գոգը, յառաջագիմութիւնը աներևակայելի է: . . . Սյն օրից պիտի թուենք ազգային բարենորոգութեան դարագլուխը, երբ ազգը դիմէ դէպի բնութիւնը, որ ոչ միայն կարող է փրկել և ազատել ազգը աղքատութիւնից, այլ և մեծ զարկ տալ նորան յառաջագէմ ուղղութեան մէջ:\*) .. Հիմնական և խելացի հնարը փրկութեան ուրիշ բան չէ կարող լինել, եթէ ոչ դառնալ իւր նախկին կացութեանը: Հողը և երկրագործութիւնը կարող է նորան փրկել»: \*\*)

Իւր նախկին կացութեանը դառնալը, դէպի բնութեան գոգը դիմելն ու սնաեսական յեղափոխութիւն կատարելը հնարաւոր չէ առանց նիւթական անհրաժեշտ պայմանի: Որքան էլ ազգը բարի կամք ունենայ երկրագործութեամբ պարապելու, չէ կարող, քանի որ հող չունի: Ինչպէս այլ, նոյնպէս և հայ ազգային շարժման նպատակը պէտք է լինի հող ձեռք բերելը, որովհետև

«Սյն ազգը, որ չունի հող ու երկիր, երբէք չյուսայ, որ պիտի հարստանայ. այդ անբնական բան է և դորան յուսալը խելագարութիւն: Թող բնաւ չյուսայ, որ առաջ հարստանայ և յետոյ երկիր ձեռք բերէ. այդ լինելու չէ: . . . \*\*\*) Որևիցէ աղքատ համարուած ազգ, եթէ ունի մի կտոր հող, ապահովել է իւր կեանքը»: \*\*\*\*)

\*) Նոյնը, Եր. 355—356:

\*\*) Նոյնը, Եր. 343:

\*\*\*) Նոյնը, Եր. 320:

\*\*\*\*) Նոյնը, Եր. 319:

Նալբանդեանի կենսագրութիւնից յայտնի է, որ նա ոչ միայն գրով, այլ և սրով աշխատում էր մի կտոր հող ձեռք բերելու իւր սիրական ազգի համար: Հայ հրապարակախօսի ու Սուաճեանի նամակագրութիւնից գիտենք, որ մի խումբ հայեր, որոնց մէջ մտնում էին նաև յիշեալ երկու գործիչները, մտածում էին Տաճկահայաստանում յեղափոխական կոմիտէներ հաստատել, արտասահմանից գէնք անցկացնել և օտարազգի նշանաւոր յեղափոխականների գործակցութիւնով ու կրիկիայի աիւերն անգլիական զօրք իջեցնելով հայ ժողովրդին ապստամբեցնել: «Երկրագործութիւնը» ցոյց է տալիս, թէ ինչ հասարակական գաղափարների տէր մարդիկ էին մասնակցում այս շարժմանը:

Մեզանում մինչև այժմ XIX դարի հայ հասարակական շարժումները, մասնաւորապէս տաճկահայի ազատագրութեան ձգտող յեղափոխական շարժումը, առանձին պատմական ուսումնասիրութիւնների նիւթ չեն դարձել: Վերջին շարժման մասին լոյս տեսած յօդուածների ու աշխատութիւնների մէջ քննադատութեան են ենթարկուած գլխաւորապէս քաղաքագիտական ու յեղափոխական տակտիկայի խնդիրները. իսկ գլխաւոր հարցերը — տաճկահայ հասարակական տարբեր խմբերի վիճակն ու յեղափոխական շարժման մասնակցելու չափը, նրանց զանազան նպատակներն ու սրանց ձևակերպումը գրականութեան մէջ — բոլորովին ի նկատի չեն առնուած: Քննադատութեան յիշեալ մակերևոյթային ուղղութեան պատճառն անշուշտ սոցիոլոգիական այն սխալ հայեացքն



է, ըստ որի ազգը մի անբաժանելի ատում է, իսկ ազգային շարժումը՝ մի պարզ գործողութիւն, զուրկ օրգանական բարդութիւնից:

Նալբանդեանի «Երկրագործութիւնը» մի լեզու- գաղին փաստաթուղթ է հայ յեղափոխութեան պատ- մագրի համար, որովհետեւ ցոյց է տալիս, թէ 60-ա- կան թուականներին յեղափոխական շարժ- ման մասնակցողների թուում կային մար- գիկ, որոնք միայն քաղաքական ազատու- թիւն ձեռք բերելու ձգտումով չէին տար- ուած, այլ նպատակ ունէին տնտեսութեան հիմնական հարցերը լուծել ու հայ գիւղա- ցու վիճակն արմատապէս տնօրինել: Այն- պիսիներին հետաքրքրում էր ոչ թէ ազատ, անկախ Հայաստանն ըստ ինքեան, այլ այն երանելի Հայոց աշխարհիկը, որտեղ հողը պատկանում է ժողովրդին ու համայնա- ցրած է, և որտեղ հայ գիւղացին իրեն տնտեսապէս ազատ է զգում: Նրանք զրել էին հետեւալ երկրնարանքը. կամ հայ գիւղացու բարօ- ռութեան համար նպաստաւոր ազատ հայրենիք և կամ ոչինչ: Այլ տեսակ անկախութիւնը նը- ըանց համար մի նոր բռնակալութիւն էր:

«Ազատութիւնը ըստ ինքեան լոկ խօսք է և իրո- դապէս չէ կարող մարմնանալ առանց տնտեսական խնդրի լուծուելուն: Ոչ մի ազատ կառավարութիւն, ոչ մի ազատ օրէնսդրութիւն չէ կարող փրկել մար- գուն սարկութիւնից, մինչև որ այդ մարդը հողի վե-

րայ իրաւունք ունեցող չխոստովանուի:\*) ... Այսօր, եթէ մի ժողովուրդ սարուկ է, եթէ նա հող չունի և եթէ յաջողի նրան հող ձեռք բերել, իրաւունքը և ժամանակը պահանջում են տնօրինել այնպէս, ինչ- պէս ցոյց է տալիս ներկայ հարկը, ինչպէս ցոյց է տալիս բանականութիւնը և ոչ այնպէս, ինչպէս հին օրերից մնացած, աւանդական կառավարութիւնքը տնօրինել են մինչև այժմ, այսինքն տէրութեան կամ ազնուականութեան սեպհականելով հողը և հասարակ ժողովուրդը զրկելով իրաւունքից: Վերջին դիպուա- ծում ազգութիւնը ազատութիւն չէ ժողովրդին, նա փոխում է միայն նորա լուծը, մեք զրականապէս թշնամի ենք այդպիսի ազգութեան, ինչպէս թշնամի ենք բռնակալութեան, ուր կամ ինչ կերպով որ յայտնուի: Գիտենք, կան մարդիկ, և մեր իսկ սիրելի բարեկամների մէջ, որ պիտի ասեն. թող միանգամ ձեռք բերուի հողը, թող ինչպէս կամի լինի կառա- վարութիւնը և տնօրէնութիւնը, յետոյ կուղղուի, կնորոգուի և այն, և այն: Չէ, այս տղայութիւն է. այս տեսակ ուղղագործութիւնքը և վերանորոգու- թիւնքը հեշտ բաներ չեն և, համարձակ կարելի է ասել, նոր ի նորոյ ձեռք բերելուց աւելի զժուար: Ուրիշների փորձերից, որ փորձողներին արժում են արեան ծովեր և որ բոլորովին ձրի ներկայանում են մեզ իբրև օրինակ, հարկ է, որ խրատուինք և չեր- թանք այն ծուռ ճանապարհը, որից և գնացողը կամի յետ դառնալ, բայց ոտքը սայթաքում է»:\*\*)

\*) Նոյնը, եր. 329—330:  
\*\*) Նոյնը, եր. 374—375:



Հայ գիւղացու սրատես իդէոլոգը գիտակցում է, որ առանց հողի համայնացման ազատ հայրենիքը երկրագործի համար կդառնայ խորթ ծնող, որ իւր ստինքները խլում է սովեալ զաւակի բերանից: Նրա երազածը շինականի մայր Հայաստանն է, որ «իւր սուրբ ծոցէն սնունդ է պարգևում լիառատ»: \*)

\*) Գիւղացու իդէոլոգի նոյնպիսի սրահայեաց բացառիկ յոռետեսութիւն ազդող ազատ Հայաստանի վերաբերմամբ գտնում ենք նաև Ս. Թորմախեանի քիչ առաջ յիշած գրքից: «Երբ մի ազգային մարմին ձգտում է ինքնագոյութեան, ամենից առաջ նա յրջօրէն ուշադրութիւն պէտք է դարձնէ. թէ իւր ներքին կենսական ոյժերի միաւորութեան կապը ինչ պայմանների մէջ են գտնուում: Առանց այդ միութեան անքակտելի և սերտ համերաշխութեան շատ վտանգաւոր է մտնել մի անսովոր ծանրութեան տակ, որին ոչ մի փթած, անհամերաշխութիւնից քայքայուած կամ կեղծ համերաշխութեամբ միացած հիմքերը չեն կարող դիմանալ և պատճառ կդառնան աւելի անողորմ վերակործանման: Այդ կենսական ներքին ոյժերից նշանաւորը անտեսական հարցն է: Դա կենսական շրջանառութեան յարաբերական կապն է մի հանրութեան մէջ գտնուած ամեն աստիճանի դասակարգութեանց համար: Չկայ մի դասակարգ, որ 61-երորդ յօդուածի իրագործմանը չցանկանար, բայց ամեն մի դասակարգը իւր ցանկութեան բոլորովին տարբեր տեսակէտովն է նայում դորա վերայ: Ինտելլիգենցիան ու Տաճկաստանի էֆենդիների երես առած խմբերը նայում են նորա վերայ, որպէս մի միջոցի վերայ, որ նրանց կմտակարարէ իշխանական ազդեցութիւն, կառավարչական բարձր պաշտօններ, դրա համար

Սրանք Նալբանդեանի maximum ծրագրի կէտերն են, որոնցով հայ հրապարակախօսը ապահովում է հայ ժողովրդի հեռուոր ապագան: Բայց նա ունի նաև մի ուրիշ ծրագիր, որը պէտք է գործադրուի մօտիկ ապագայում: Նալբանդեանը կարծում է, որ մօտ է այն ժամանակը, երբ պիտի հասանէ Թուրքիոյ դրամական կեանքի վախճանը (եր. 343):

լինի թերևս, որ այդ խմբերից մի քանիսը ձգտում են ազնուութեան . . . Վաճառական, կալուածատէր, չարչի քաղաքացիները երազում են իւրեանց լայնածաւալ օգերացիայի վերայ, մի այնպիսի գործ, որին միշտ կդաշնակցի ազնուական ազգակիցների տիրապետական ոյժը և դրա համար Տաճկահայաստանում արդէն գնուել են և գնուում են լայնատարած գիւղեր, հողեր: Այժմ համարեա թէ մեծ մասամբ հողատէրերը քաղաքացիներն են, գիւղացիները համարեա ոչինչ չունին: Գիւղացու ակնկալութիւնը բոլորովին տարբեր է: Նա սպասում է այն վիճակին, որը երբէք չէ վայելել և ոչ իւր նախնիքը պատմական կեանքումը: Նա սպասում է թշուառութեան արտասուները սրբելու, կեանքի անդորրութեան, ազատ շունչ քաշել, աներկեան օրեր, ապահովութիւն իւր կեանքին, իւր ստացուածքին և իւր գործին: Նա ցանկանում է միայն, որ նա կարողանայ լծել իւր առատութիւն պարզեող գութանը, մշակել դարերով խոպան մնացած երկիրը և ընտանեկան ցնծութեամբ հնձել աշխատասէր ձեռների պտուղը: Կարողութիւն ունենալ պատրաստ պահելու իւր հիւրասէր սեղանը բոլոր անցաւորների համար և նոցա հետ զուարթ սրտով բաժանել արդար վաստակի արդիւնքը: Երջանիկ լինել ընտանիքով, երջանիկ լինել դրացիներով և բոլոր գիւղացիներով: Մի շատ համեստ և աշխարհաբոլոր գիւղացիներով: Մի շատ համեստ և աշխարհաբոլորի տիրապետութեան օրերումը, չեն էլ հասնիլ



«Մի գեղեցիկ առաւօտ թէ Պօլսի և թէ դաւառ-  
 ների մէջ մարդիկ չպիտի կարողանան հաց ճարել,  
 աղքատութիւնը և սովը պիտի հարկադրէ նրանց դէպի  
 յափշտակութիւն և կողոպուտ, մի խօսքով՝ բարեկե-  
 նեան խառնակութիւն: \*)... Աղգը պէտք է մտածէ  
 իւր ապագան և ազատէ իւր անձը սարսափելի նե-  
 դութիւնից ու աղքատութիւնից, որ եթէ ոչ այսօր,  
 վաղը պիտի թագաւորէ բոլոր Թուրքիոյ մէջ՝ Հնայե-  
 լով այն պարտքին, որ առնում է նա Անգլիայից»... \*\*)

Ինքնագոյութեան ժամանակին: Եթէ այսպիսի տար-  
 բեր հակադրական մտքերով եղգացմունքներով կարելի լինի  
 հասնել մի նպատակի, որի համար գերբնական կամ գերազ-  
 գային ոյժ է հարկաւոր, այն ժամանակ ճշմարիտ է,  
 որ գիւղացու վզից կը վերառնեն նորա քրտին-  
 քով տոգորուած: Ճնշող, կեղտոտ լուծը, նորա  
 տեղը կգնեն նորը, փառքերով զարդարուն, բայց  
 աւելի ծանր, սեպհականը, որի քրտինքը միշտ  
 պէտք է լուանալ արիւնոյ: Նորան կասեն. «Այդ  
 նոր լուծը թէ և ծանր է, բայց քո սեպհականն է,  
 քաշիբ, հողիդ դուրս դայ»: Այն ժամանակ գիւ-  
 ղացին կզգայ, որ թէ և քրդեր ու արտաքին հա-  
 րստահարողներ այլ ևս չկան, բայց իւր վիճակը  
 աւելի և աւելի ծանրացել է, ներկան անցեալից  
 աւելի վատ: Այդ ծանրութեան տակը նա ընկճում է՝ կոր-  
 ծանելով իւր վերայ հաստատուած շինութիւնը, տրորուելով  
 նորա տակը: Աղգութեան գոյութիւնը ազգային անախտու-  
 թեան առարկայի համար չէ, այլ ազգային բարեկենդանու-  
 թեան համար է, իսկ ազգային բարեկենդանութեան հիմքը  
 գիւղացու բարեկենդանութիւնն է: Ա. Թոխմարեան. «Մա-  
 սիս լեռների հարաւային ստորոտներ», Բ. մաս, էր. 23—26:

\*) Մ. Նալբանդեանի երկերը, Բ. 336—337:

\*) Նոյնը: Կր. 377:

Հէնց այս վտանգից պաշտպանուելու համար է  
 հայ հրապարակախօսը յորդորում, շտապեցնում, որ  
 հայերը դիմեն դէպի բնութեան գոգը, դէպի հայրե-  
 նիք, դէպի պարզեատու հողը: Երկրագործու-  
 թիւնը մի փրկարար շանթարգել է նաև  
 այն սոսկալի կայծակներին հանդէպ, որոնք  
 պիտի փայլատակեն սնանկացած Թուր-  
 քիայի գլխին:

«Այն ժողովուրդը, որ դուրս չէ եկել իւր պատ-  
 մական աշխարհից, թող և չշարժի. մենք ընդդէմ ենք  
 գաղթականութեան և գաղթականութիւն չէ մեր քա-  
 ըողածը. իսկ այն մասը, որ դուրս է իւր աշխարհից,  
 ասել է թէ գտնում է գաղթականութեան և պան-  
 դրխտութեան մէջ, նորան հրաւիրում ենք վերա-  
 դառնալ, մանաւանդ Փոքր Ասիա, որ աւելի հրա-  
 պուրիչ է իւր ծովեզերեայ դրութեամբ: Հերիք է,  
 որ մի երկու գլխաւոր և յարմարաւոր տեղերում  
 սկսանի երկրագործութիւնը, միւս մասերում, որ  
 թերևս հեռի են ծովից, նոյնպէս կզարթի... Ո՞վ  
 արգելառիթ է հայոց ժողովրդին, որ նա չբնակի  
 վերասաց տեղերում... Եւ փոքր գործ կարելի է  
 տեսնել մի հողի վերայ, ուր աճում է և բազմանում  
 է ամենայն ընտանի անասուն և զրատ, ուր բու-  
 սանում է բամբակ, ցորեան, բրինձ, վարսակ, գարի,  
 տորոն, սուսամ, շաքարաեղէգն, ճակընդեղ և այլ հա-  
 զար բուսական և ընդեղէն... Այս անուանուած բեր-  
 քերից գէթ երկուքը կամ երեքը բաւական են հա-  
 րստացնել մի բազմութիւն, որ արիաջան փութով  
 պարապում էր այն նուիրական գործով: \*)

\*) Նոյնը, Կր. 344:



Ահա այս էլ Նալբանդեանի minimum ծրագիրն է, որ հայ ժողովրդին փրկելու է չարից մինչև այն հեռուոր օրհնեալ ժամանակը, երբ ըստ Խրիմեանի՝

Կանցնի ձմեռ, կուգայ գարուն,  
Մեռելոց դաշտ ծաղկազարդի,  
Անշատ անշատ ոսկերոտիք  
Շարժին հրաշիւք, կցին իրար,  
Շունչ մի շնչէ կենդանարար,  
Յառնի, կանգնէ մեռելոց դաշտ . . .  
Մինչ վերածնին հայոց որդիք  
Եւ Հայաստան յառնէ փառօք . . .  
Եւ Եսային հնչէ պատգամ.  
Այսպէս ասէ Տէր զօրութեանց.  
Այլ ևս հաշտեալ եմ ես ընդ քեզ,  
Ո՛վ տառապեալդ Հայաստան: \*)

XI.

Այժմ անցնում ենք Նալբանդեանի աշխարհահայեացքի ուսումնասիրութեան մի կէտին, որ մինչև այժմ ակնարկով անգամ շօշափուած չէ եղել, չնայած որ առանց այս կէտի լուսաբանութեան ոչ մի ուսումնասէր իրաւունք չունի վերջնական եզրակացութիւններ հանելու հայ հրապարախօսի սոցիալական դաւանանքի դասակարգային գոյնի մասին: «Երկրագործութիւնը որպէս ուղիղ ճանա-

\*) Խրիմեան Հայրիկ «Վերջալոյսի ձայներ», Գահիրէ, 1901, Լր, 12—13:

պարհ» գրքում կայ մի փոքրիկ չլուծուած հանգոյց, որն առանց ուշադրութեան թողնել անցնելը, ճիշտ է, թեթևութիւն է ուսումնասէրի համար, որովհետև այս դէպքում վերջինս ազատոււմ է այն լուծելու արքնութիւնից, բայց և միաժամանակ երկչուտ, անպատուաբեր ու քօղարկուած փախուստ է, որ վկայում է, թէ բազմավէպ հետախոյզը չէ օժտուած հանգուցալիտոր սրով:

Մինչև հիմայ Նալբանդեանի աշխարհահայեացքի մէջ մենք դեռ չենք նկատել այնպիսի մտքեր, որոնք տարբեր լինէին նրա նախկին ասածներից և առաջին հայեացքից երևացնէին, թէ հայ հրապարակախօսի քարոզութիւնները մէջ կայ մի հակասութիւն, որ պէտք է պարզել: Մինչև հիմայ «Երկրագործութիւնից» քաղած բազմաթիւ հատուածներն ու այս առթիւ արած դիտողութիւնները ցոյց տուին, որ հեղինակը ջատագով է բացառապէս մանր երկրագործութեան, պաշտպան գիւղացիութեան շահերի, դէմ է կապիտալիզմին և ժխտում է բանուորութիւնը, վարձկան մշակութիւնն ու վաճառականութիւնը: Սակայն նոյն այն հեղինակութեան մէջ, որի վերնագիրն է «Երկրագործութեանը որպէս ուղիղ ճանապարհ» և որը մանր երկրագործութեան ու գիւղացիութեան ի խորոց սրտի փառաբանութիւն է, գտնում ենք նաև այնպիսի հատուածներ, որոնք ըստ երևոյթի միանգամայն հակասում են նրա՝ մինչև այժմ ասածներին:

«Վաճառականութիւնը և արուեստը, — գրում է



նոյն գրքում Նալբանդեանը, — անհրաժեշտ է և մեծապէս պատճառ ազգի հարստութեան, բարօրութեան ու երջանկութեան» ....\*)

«Մի քանի տարի կայ, որ լսում ենք հանապազմեր վաճառականներից մի կարծիք, թէ հարկաւոր է աշխատել վաճառականութեան վերայ, որպէս զի ազգը հարստանայ: Երանի թէ, ասում ենք մեք. քանզի այն տեսակ վաճառականութեան մէջ չենք տեսնում ազգային հարստութեան հիմքը: . . . Այն ժամանակ ազգային է վաճառականութիւնը, երբ նորա խարխը գրուած է ազգի հիմքի վերայ»: \*\*)

«Մինչև այժմ հայոց ազգի մէջ խախուտ և անհիմն վաճառականութեան խորհրդով հիմնուեցան մեծ կամ փոքր ընկերութիւններ, նորանցից ոմանք ընկան դէպքերի հարուածի տակ, ոմանք տևում են կիսամեռ, բայց մինչև այժմ չերևեցաւ մի ընկերութիւն ազգային վաճառականութեան»: \*\*\*)

«Եւ միայն հում բերքերը չեն, որ կարող են գրաւել հայ վաճառականի գործունէութիւնը. այդ բերքերի մշակութիւնը մի լնյն հանդէս, մի բնական ասպարէզ այն ժրաջան ու գործունեայ մարդերի համար, որ ստուգապէս կամին պարապել վաճառականութեան: Նոյն այն գործարանքը, նոյն այն մե-

\*) Մ. Նալբանդեանի երկերը, Բ. կր. 320: Արուեստ ասելով Նալբանդեանը հասկանում է ընդհանրապէս հում նիւթի մշակութեամբ պարագող արտադրութիւն:

\*\*) Նոյնը, կր. 345—346:

\*\*\*) Նոյնը, կր. 349—350:

քենաները, որ կարող են ներգործել Եւրոպայի մէջ ծանր պայմանների տակ, կարող են ներգործել և Ասիոյ մէջ, ուր կեանքի պիտոյքը, պարզութիւնը և այլ բնական հանգամանքները աւելի դիւրութիւն կարող են տալ այսպիսի ձեռնարկութեանց»: \*)

Այս ու շատ ուրիշ պարբերութիւններ կասկած չեն թողնում, որ նոյն Նալբանդեանը կողմնակից է նաև վաճառականութեան, որը նրա ասելով՝ պէտք է լինի ազգային, և մինչև անգամ խրախուսում է գործարանային արդիւնաբերութիւնը: Ահա հանգոյցը, որ չէ լուծուած, սակայն որը պէտք է լուծել և կամ այլ ևս երբէք բերան բաց չանել Նալբանդեանի մասին խօսելու համար:

Հայ հրապարակախօսի երկում պարունակուած այս հակասութեան վրայից թուել են «Երկրագործութիւնը» մինչև այժմ ուսումնասիրողները: Սրանցից ոմանք ուշադրութիւն դարձնելով այն մտքերի վրայ միայն, որոնք վերաբերում են երկրագործութեան ու հողի համայնացման, և անտես առնելով վաճառականութեան ու արդիւնաբերութեան զարգացման նուիրուած էջերը, եկել են այն եզրակացութեան, որ Նալբանդեանը զիւղացիութեան իդէոլոգ է ու թշնամի բուրժուազիայի: Միւսներն, ընդհակառակը, մոռացութեան մատնելով այն էջերը, որոնք նուիրուած են երկրագործութեանն ու հողի համայնացմանը, և ի նկատի ունենալով միայն այն

\*) Նոյնը, կր. 357:



մտքերը, որոնք վերաբերում են վաճառականութեանն ու արգիւնաբերութեան զարգացմանը, «Երկրագործութեան» հեղինակին անուանում են «երրորդ դասի» կամ բուրժուազիայի իդէոլոգ ու մանր արտադրողները թշնամի:

Հակառակող կողմերից իւրաքանչիւրը ուշադրութեան առած էջերից ճիշտ եզրակացութիւն է հանում: Յիրաւի, եթէ ի նկատի ունենանք միայն այն էջերը, որտեղ հեղինակը շատագոյնում է մանր երկրագործութիւնն ու ժխտում կապիտալիզմը, ապա Նալբանդեանին միայն գիւղացիութեան իդէոլոգ կարելի է անուանել: Իսկ եթէ ի նկատի ունենանք միայն այն էջերը, որոնք նուիրուած են հայ վաճառականութեան ու արգիւնաբերութեան զարգացման՝ անկախ այն սահմանափակումներից, որ դնում է հեղինակը, այն ժամանակ հայ հրապարակախօսի աշխարհայեացքին չէ կարելի այլ անուն տալ, քան բուրժուազիայի իդէոլոգիա:

Սակայն երկու բանակներն էլ իրենց եզրակացութիւնների համար բաւարար հիմքեր չունեն: Առաջներին—Նալբանդեանին գիւղացիութեան իդէոլոգ անուանողներին ի պատասխան վերջինները—հայ հրապարակախօսին բուրժուազիայի իդէոլոգ անուանողներն ու կամ ընթերցողները կարող են ցոյց տալ վաճառականութեան ու արգիւնաբերութեան զարգացման նուիրուած էջերը: Եւ ընդհակառակը, վերջինների ասածները հերքելու համար առաջինները ու կամ դարձեալ ընթերցողները կարող են մասնաւոր լինել այն մտքերի վրայ, որոնք մանր երկրա-

գործութեան ու գիւղացիութեան շատագոյնութիւն են հանդիսանում:

Ո՞րտեղ է ելքը: Մի՞թէ Նալբանդեանն Եանուսի պէս երկու երես ունէր, որոնցից մէկով ժպտում էր մանր գիւղացիութեանը, իսկ միւսով՝ բուրժուազիային: Մի՞թէ նա մի անհմուտ կառավար էր, որ հասարակական սայլի երկու ծայրերին հակաձիգ գրաստներ լծելով մտածում էր անվտանգ ընթանալ պատմական ուղիով: Եւ կամ մի՞թէ մեր մեծ հրապարակախօսն այնքան թուլամիտ մարդ էր, որ չէր կարողանում նկատել իւր միւկնոյն գրուածքի մէջ կողք կողքի գրուած խօսքերի ազդակող հակասութիւնը: Եթէ ոչ, ապա ի՞նչպէս պէտք է հաշտեցնել այս հակասութիւնը, հաշտեցնել ոչ բռնազբօսիկ, մտացածին ու անհիմն բացատրութիւններով, այլ հիմնաւոր, իրական ու ճշմարիտ ապացոյցներով:

Das Wahre ist das Ganze! \*)

Այս հակասութիւնը լուծելը շատ հեշտ է, եթէ միայն ի նկատի ունենանք նրա գրուածքի ամբողջութիւնը և ոչ թէ հետևենք դժուարութիւնների վրայից ուսնելու, նեղ դռներից խուսափելու անզօր խորամանկութեան:

Մեր խորին համոզումով Նալբանդեանի աշխարհայեացքի մէջ թագաւորում է միայն մէկ դասակարգի ոգի. հայ հրապարակախօսը գիւղացիութեան իդէոլոգ է հանդիսանում նոյն իսկ այն ժամանակ, երբ խօսում է վաճա-

\*) «Ամբողջութեան մէջ է ճշմարտութիւնը» (Հեղել):



նախանութեան ու արդիւնաբերութեան  
զարգացման մասին:

Մօտենանք այս հանգոյցին և տեսնենք, թէ  
ինչպէս մէկը կարող է խօսել վաճառականութեան  
ու արդիւնաբերութեան զարգացման օգտին և միևնոյն  
ժամանակ մնալ գիւղացիութեան պաշտպան:

XII.

Անկարող լինելով ինդիւիդուալիստական աշխար-  
հահայեացքի սահմաններէց դուրս գալու ու երևա-  
կայելու մի հասարակակարգ, որտեղ գոյութիւն ունի  
բարիքների ընկերական բաշխումն միայն, և միևնոյն  
ժամանակ չիմանալով, թէ՛ սրպիսի աղետաբեր ազ-  
դեցութիւն ունի ապրանքային անտեսութիւնը մանր  
արտադրութեան վրայ, Նալբանդեանն իւր քարոզած  
իդէալական կարգերում տեղ է տալիս փոխանակու-  
թեանն ու սրա պաշտօնեայ վաճառականներին: Վա-  
ճառականների գործ է համարում ոչ միայն պարզ  
առք ու վաճառքը, այլ և հում նիւթերի մշակու-  
թիւնը: Հայ հրապարակախօսն ընդունում է  
վաճառականութեան (առուտուրի ու հում նիւ-  
թի մշակութեան) կարևորութիւնը, սակայն  
մի մեծ սահմանափակումով. այն է, որ այս  
գործով պարտապողները կազմեն ընդհան-  
րութեան մէջ փոքրամասնութիւն, հակա-  
ռակ դէպքում ընդհանրութեանը, նրա ա-  
սելով, վտանգ է սպառնում: Թէ ընդհանրու-  
թեան հետ համեմատած ինչ մեծութիւն պէտք է  
ունենայ փոքրամասնութիւնը, որքան մարդիկ պէտք

է պարապեն վաճառականութիւնով և կամ ով պէտք  
է որոշէ, թէ որոնք են պարապելու երկրագործու-  
թիւնով և որոնք առուտուրով ու հում նիւթի մշա-  
կութիւնով, որպէս զի հասարակութեան մէջ մեծա-  
մասնութեան ու փոքրամասնութեան այս յարաբե-  
րութիւնը պահպանուի անխախտ, — Նալբանդեանը չէ  
ասում, բայց իւր քարոզած կարգերի համար ան-  
հրաժեշտ պայման է դնում երկրագործ մեծամաս-  
նութեան ու առևտրական ու հում նիւթ մշակող  
փոքրամասնութեան գոյութիւնը:

«Երբ որ մի ազգ կազմող անհատների մեծա-  
գոյն մասը պարապի երկրագործութեամբ և առհա-  
սարակ գիւղական անտեսութեամբ, այն ժամանակ  
այդ ազգի ընդհանրութիւնը հարուստ է և ապահո-  
վեալ, որովհետև նորա հիմքը դրուած է բնականա-  
պէս և բնութեան վերայ: Եւ այս պատճառով փոք-  
րագոյն մասը, որ չէ պարապում երկրագործու-  
թեամբ, կարող է հաւաստի լինել, որ հազիւ պիտի  
կարողանայ մշակել, շինել, գործել և վաճառել այն,  
ինչ որ դուրս է բերում գեանից նորա մեծագոյն  
մասը: Ազգի մեծագոյն մասը երկրագործութեամբ  
ապահովեալ է և անհնար է, թէ նեղութեան պատա-  
հի ապրուստի կողմից: Փոքրագոյն մասը, որ բաղ-  
կանում է վաճառականներից, չէ կարող անգործ  
մնալ, քանի որ մեծագոյն մասի արդիւնքը սպասում  
է նորա կամ մշակութեան, կամ վաճառականութեան,  
և մի որևիցէ մի դժբախտ դիպուածում այդ փոք-  
րագոյն մասից ամենափոքրագոյն մի մասը միայն  
կարող է ենթարկուել առօրեայ և անցողական նե-



դուժեան, քանզի ազգի հիմքը դրուած է երկրի մա-  
կերևոյթի վրայ և կախուած չէ օդի մէջ»։ \*)

Թերևս ոմանք հէնց այստեղ մեզ ընդհատելով  
ասեն, որ չնայած Նալբանդեանը վաճառականու-  
թեանն երկրորդական տեղ է սալիս, այնուամենայ-  
նիւ չի կարելի նրան գիւղացիութեան գտարին պաշտ-  
պան, իդէոլոգ համարել, որովհետեւ նա յամենայն  
դէպս էլի ընդունում է առևտրական ու արդիւնա-  
բերող դասակարգի գոյութեան անհրաժեշտութիւնը,  
ուրեմն և, — կառարկեն, — հայ հրապարակախօսը մա-  
սամբ հանդիսանում է նաև բուրժուազիայի իդէոլոգ։  
Այս դատողութիւններին ի պատասխան կարելի է  
ասել, որ մի դասակարգի իդէոլոգ լինելու  
ու կոչուելու համար անհրաժեշտ չէ միւս  
դասակարգերի գոյութիւնը բացարձակա-  
պէս ժխտելը։ Իդէոլոգների շատ փոքր մասն է  
այսպիսի մտածողութեան տէր. քչերն են արմատա-  
պէս հերքում ուրիշ դասակարգերի գոյութեան իրա-  
ւունքը, մինչդեռ մեծամասնութիւնը խոստովանում  
է իւր ջատագոված դասակարգի կողքին միւս հա-  
սարակական խմբերի գոյութիւնը, միայն սրանց շա-  
հը ենթարկում է իւր դասակարգի շահերին։ Այս  
հարցում էլ մոնիստները սակաւաթիւ են, մինչդեռ  
դուալիստները կամ պիւլերալիստները՝ ծովի աւազից  
աւելի։

Անգլիացի տոնմիկ լորդը, գերմանացի ազնու-  
կանը ու կամ ուսու կալուածատէրն երբէք չեն հեր-

\*) Նոյնը, եր. 313.

քել, որ ինդուստրիան նոյնպէս որոշ արժէք ունի  
ժողովրդի անտեսական կեանքում։ Թէ անգլիացի  
լորդը, թէ գերմանացի ազնուականն ու թէ ուսու  
կալուածատէրը սրանով չդարձան Ֆէոդալականու-  
թեան դասալիքներ ու բուրժուազիայի կուսակից-  
ներ։ Ոչ, որովհետեւ կարևորն այդ չէ, այլ այն, որ  
ամեն անգամ, երբ կընդհարուեն մեծ հողատիրու-  
թեան ու բուրժուազիայի շահերը, նրանք կըռնեն  
մեծ հողատէր դասակարգի կողմը, որով երևան կհա-  
նեն իրենց իսկական դասակարգային գոյնը և կա-  
պացուցեն, որ իրենց հոգն ու մտածմունքը ազ-  
նուական ու կալուածատէր դասակարգի բարգաւա-  
ձումն է գլխաւորապէս։

Իւր նշանաւոր ուտոպիայի — «Պոլիտէայի» («Պե-  
տութիւն») մէջ Պլատոնն անհրաժեշտ է համարում  
արհեստաւոր ու երկրագործ դասակարգերի գոյու-  
թիւնը։ Այս ստորին դասակարգերը պէտք է զբաղ-  
ուէին մանր արտադրութեամբ՝ անհատապէս սեփա-  
կանելով արտադրութեան միջոցները, մինչդեռ փի-  
լիսոփաներն ու ազնուականները ազատ պէտք է լի-  
նէին Ֆիզիքական աշխատանքներից և վայելէին ու-  
րիշների արտադրած բարիքները։ Միթէ կարելի է  
Պլատոնին գիւղացիութեան ու արհեստաւորութեան  
շահերի պաշտպան յայտարարել հիմնուելով լոկ այն  
հանգամանքի վերայ, որ նա անհրաժեշտ է համա-  
րում այս հասարակական խմբերի գոյութիւնը։ Ամե-  
նակին։ Քննադատներն իրաւամբ Պլատոնի կոմուն-  
նիզմն արիստոկրատական են յայտարարում, որով-  
հետեւ մեծ փիլիսոփան իդէալական է համարում այն-



պիսի կարգերը, երբ արխատուհրատիան առանց աշխատելու վայելում է աշխատող դասակարգերի յաւելեալ արգիւնքը:

Ճիշտ նոյնպէս էլ Նալբանդեանը չէ գառնում վաճառականների ու արգիւնաբերողների ի դէպ լոգ լոկ այն պատճառով, որ նա սրանց գոյութեան իրաւունքն ընդունում է: Վերլուծութիւնը պէտք է շարունակել ու տեսնել, թէ արդեօք սր հասարակական խմբի շահերն են նրա համար գերակայ և որինը՝ օժանդակ ու ստորադաս. այն ժամանակ միայն վերջնականապէս լուծուած կլինի Նալբանդեանի՝ գաղափարապէս սր դասակարգին պատկանելու հարցը:

«Երկրագործութեան» ուշադիր վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ հայ հրապարակախօսի համար վաճառականութեան շահերն ինքն ըստ ինքեան նշանակութիւն չունեն. նա սրանց վրայ նայում է մեծամասնութեան, երկրագործ մասսայի շահերի տեսակէտից:

Վաճառականի գործունէութիւնը կարող է երկրագործի համար չէզոք լինել, այսինքն անօգուտ ու անփաստ: Երբ մի հայ վաճառական Չինաստանից թէյ առնելով տանում, վաճառում է Փրանսիայում, նրա արածը հայ գիւղացու համար ոչ օգտակար է և ոչ փաստակար: Կարող է վաճառականի գործունէութիւնը հայ գիւղացու համար ոչ թէ չէզոք, այլ փաստաբեր լինել: Օրինակ՝ երբ հայ վաճառականը Ռուսիայից ալիւր է ներմուծում Կովկաս և այսպիսով մրցելով ցորեն ծախող հայ գիւղացու հետ՝ իջեցնում է սրա

ապրանքի գինը և կամ անվաճառ թողնում սրա ցորենը,—նրա գործունէութիւնն անշուշտ փաստակար է հայ գիւղացու համար: Մեր յիշած երկու դէպքում էլ թէև գիւղացին հաստատապէս ոչ մի օգուտ չի ստանում, բայց վաճառականը կարող է օգտուել: Եթէ անհատների փոխարէն վերցնենք դասակարգեր, կարող ենք ասել, որ առևտրական դասի գործունէութիւնը իւր համար կարող է օգտակար լինել նաև այն դէպքերում, երբ նոյն գործունէութիւնից ոչ մի օգուտ չէ ստանում հայ գիւղացիութիւնը և կամ նոյն իսկ փաստում է:

Նալբանդեանը բացարձակապէս մերժում է այն պիսի վաճառականութիւնը, որ կարող է օգուտ բերել վաճառականին, ուրեմն և վաճառական դասին, բայց օգուտ չի բերիլ և կամ վնաս կբերէ ազգին, այսինքն ժողովրդին կամ երկրագործ մասսային:

«Թող հայ վաճառականը հազար տարի ապրանք բերէ Եւրոպայից ու վաճառէ, կամ, որ նոյն է, օտարի ապրանքը ուղարկէ Եւրոպա, ազգին ոչ շահ կայ և ոչ փաստ, որպէս նաև ոչ ազգային վաճառականութիւն. վաճառականը թերևս ինքը շահուի, դարձեալ ազգին բան չկայ»: \*)

«Այս տեսակ վաճառականութեամբ թերևս, եթէ հայը միջնորդ լինէր երկու համագոր աշխարհների միջև, գուցէ կարողանար ապահով եղանակով ապ-

\*) Նոյնը, էր. 346.



րել, թէև միմիայն իւր համար, առանց ազգի ընդհանրութեան օգուտ բերելու: \*)

«Թող հազարաւոր դառնայ հարուստ անհատների թիւը . . . ի վերայ այսր ամենայնի ազգի ընդհանրութիւնը կմնայ անշարժ և անդամալուծեալ»: \*\*)

Անկասկած է, որ հայ հրապարակախօսի հոգար ոչ թէ վաճառական դասի բարօրութիւնն է, այլ ժողովրդինը:

«Մինչև այժմ, — գանդատուում է Նալբանդեանը, — հայոց ազգի մէջ խախուտ և անհիմն վաճառականութեան խորհրդով հիմնուեցան մեծ կամ փոքր ընկերութիւններ, նորանցից ոմանք ընկան գէպքերի հարուածի տակ, ոմանք տևում են կիսամեռ, բայց մինչև այժմ չերևեցաւ և ոչ մի ընկերութիւն, որ պարապէր երկրագործութեան և երկրագործական բերքերի մշակութեան, մինչև այժմ չերևեցաւ մի ընկերութիւն ազգային վաճառականութեան»: \*\*\*)

Ի՞նչ է հասկանում «երկրագործութեան» հեղինակն ազգային վաճառականութիւն ասելով:

«Եւ միթէ կարծում են մեր պատուելի վաճառականք, թէ Մէնչեստրի, Մարսէյի կամ այլ ևրոպական քաղաքների հետ առուտուր ունենալը կարելի է անուանել ազգային վաճառականութիւն միայն այն պատճառով, որ ինքեանք հայ էին: Նոցա վաճառականութիւնը ազգային չէ և ազգի ընդհանուրի

\*) Նոյնը, Կր. 355:

\*\*) Նոյնը, Կր. 356:

\*\*\*) Նոյնը, Կր. 349—350:

շահի հետ չունի որևիցէ վերաբերութիւն: Այն ժամանակ միայն կարող է երևիլ ազգային վաճառականութիւն, երբ նա գլխաւորապէս հայի առաջ բերած նիւթը կամ արդիւնքը վաճառէ, այն ժամանակ միայն ազգը օգուտ կքաղէ մեր վաճառականների գործառնութիւնից, երբ սոքա միջնորդ լինին հայոց ընդհանրութեան և Եւրոպիոյ մէջ, այն ժամանակ ազգային է վաճառականութիւնը, երբ նորա խարխուրը դրուած է ազգի հիմքի վերայ»: \*)

Այն վաճառականութիւնը, որ չի հիմնուում երկրագործութեան վերայ, որ չի վաճառում երկրագործական արդիւնքներ, որ չի նպաստում գիւղացու բարօրութեանը, ազգային վաճառականութիւն չէ և ազգի շահի հետ ոչ մի վերաբերութիւն չունի: Ընդհակառակը, ազգային վաճառականութիւնը, որ երկրագործութեան վերայ է հիմնուում, օգտակար է և գովելի:

«Հայոց ազգը քանի որ չունի սեպհական երկրագործութիւն բոլոր նորա ճիւղերով, նորա վաճառականութիւնը կլինի Եւրոպացոց համար ծառայութիւն: Իսկ այն օրից, երբ ազգը կսկսի մշակել հողը, երբ մարդիկ կդառնան իւրեանց հայրենիք, բարեբեր երկիրները, որ այսօր գրեթէ ամայի և խոպան է, այն օրից կը կենդանանայ և հայոց վաճառականութիւնը: Եւ այն օրի վաճառականը . . . և ինքը կշահուի տասնապատիկ աւելի և մեծ ու մեծ շահ

\*) Նոյնը, Կր. 345—346:



կրե՛րէ ազգի ընդհանրութեան, որ է ազգի հիմքը, լծակը, շարժարանը»։ \*)

Առանց երկրագործութեան չկայ վաճառականութիւն, և առանց ազատ հողի չկայ երկրագործութիւն,» — ասում է մի տեղ Նալբանդեանը «Երկրագործութեան» մէջ: Այժմ մեզ համար հասկանալի է այս խօսքերի իմաստը: Հայ հրապարակախօսն ուզում է ասել, թէ առանց ազատ հողի՝ առանց համայնացրած հողի չկայ աշխատաւորի երկրագործութիւն, իսկ առանց աշխատաւորի երկրագործութեան չկայ «ազգային» վաճառականութիւն: Ակամայ մարդու միտն է գալիս միջնադարեան ասացուածը, թէ փրկիսփայլութիւնն աստուածաբանութեան աղախինն է: Նալբանդեանի քարոզած վաճառականութիւնը երկրագործութեան գետնատարած աղախինն է, իսկ առևտրական դասը՝ գիւղացի դասակարգի հլու սպասաւորը:

XIII.

Ինչպէս նախորդ գլխում մէջ բերած հատուածները ցոյց են տալիս, Նալբանդեանը վաճառական ասելով հասկանում է թէ առևտրականին ու թէ արդիւնաբերողին: Ուրեմն երբ հայ հրապարակախօսը քարոզում է ազգային վաճառականութիւն, խօսքը չէ վերաբերում միայն առուտուրին, այլ և արդիւնաբերութեանը: Առուտուրն ազգային է այն ժամանակ, երբ վաճառականը գնում ու վաճառում է հայ գիւ-

\*) Նոյնը, Կր. 357:

ղացու ապրանքը, իսկ արդիւնաբերութիւնն ազգային է այն ժամանակ, երբ մշակում, ձեռագործում ու մեքենագործում է դարձեալ նոյն հայ գիւղացու արտադրած արդիւնքները: Սխալ կլինի կարծել, թէ երբ Նալբանդեանն իւր սիստեմի մէջ տեղ է տալիս հոլմ նիւթի գործարանային մշակմանը, ապա նա քարոզում է կապիտալիզմ: «Երկրագործութեան» հեղինակի ասածն այսպէս ըմբռնել նշանակում է ամենևին գաղափար չունենալ ոչ միայն կապիտալիզմի, այլ և ընդհանրապէս հասարակական կազմակերպութիւնների էութեան մասին:

Ինչպիսիք են տարբերում հասարակական կազմակերպութիւններն իրարուց: Ի՞նչ զանազանութիւն կայ, օրինակ, կապիտալիզմի ու սոցիալիզմի միջև: Եթէ ասենք, որ արտադրութեան միջոցներն են յիշեալ հասարակութիւններին այս կամ այն կազմակերպութեան կերպարանքը տալիս, ճիշտ չի լինիլ, որովհետև արտադրութեան նոյն միջոցները, գործարան, մեքենայ ևլն, դոյութիւն ունեն թէ կապիտալիստական ու թէ սոցիալիստական հասարակութիւնների մէջ. իսկ տարրական տրամաբանութիւնից յայտնի է, որ ընդհանուր յատկութիւնը տարբերիչ յատկութիւն լինել չէ կարող: Ուրեմն սրն է բաժանման այն հիմունքը, որով զատում ենք հասարակութիւնները միմեանցից և անուանում ասիական, անտիկ, ֆէոդոլական, կապիտալիստական ու սոցիալիստական: Այս հարցման միակ ճշմարիտ պատասխանը հետեւեալն է. ոչ թէ արտադրութեան միջոց-



ն երբ, այլ մարդկանց՝ արտադրութեան մէջ  
 ունեցած տարբեր յարաբերութիւնն է, որ  
 հասարակական կազմակերպութեանը որոշ  
 կերպարանք է տալիս: Կապիտալիզմը ոչ այլ  
 ինչ է, եթէ ոչ մարդկանց յարաբերութիւն արտա-  
 դրութեան մէջ: Ի՞նչ է սոցիալիզմը, եթէ ոչ նոյն-  
 պիսի յարաբերութիւն: Թէև յիշեալ երկու հասարա-  
 կութեան արտադրութեան միջոցները նոյնն են,  
 միայն զարգացման տարբեր աստիճանով, այնուամե-  
 նայնիւ այս հասարակութիւնները խիստ տարբեր-  
 լում են իրարուց նրանով, որ մինչդեռ կապիտա-  
 լիստական կարգերում մարդիկ արտադրութեան մի-  
 ջոցներին վերաբերում են ոմանք իբրև տէր և ոմանք  
 իբրև բանուոր, սոցիալիստական կարգերում, ընդ-  
 հակառակը, բոլոր քաղաքացիք ընկերներ են, այ-  
 սինքն հանգէս են գալիս միաժամանակ թէ իբրև  
 արտադրութեան միջոցների սեփականատէր ու թէ  
 իբրև նոյն միջոցներով արտադրող բանուոր:

Մասնաւորելով խօսքը պէտք է ասենք, որ գոր-  
 ծարանը, մեքենան և այլն առանց մարդ-  
 կային որոշ յարաբերութիւնների կապի-  
 տալիստական հասարակութիւն կազմել  
 չեն կարող: Հռչակաւոր են այս մասին Կարլ  
 Մարքսի հետևեալ խօսքերը, որոնք գտնուում են նրա՝  
 «Վարձու աշխատանք ու կապիտալ» յօդուածի մէջ:

«Նեղըը նեղը է: Միայն որոշ յարաբերութիւն-  
 ների ժամանակ է նա ստրուկ դառնում: Բամբակ  
 մանող մեքենան բամբակ մանելու մեքենայ է: Միայն  
 որոշ յարաբերութիւնների ժամանակ է նա դառնում

կապիտալ: Այս յարաբերութիւններից դուրս նա կա-  
 պիտալ չէ ճիշտ այնպէս, ինչպէս ոսկին ըստ ին-  
 քեան՝ փող և շաքարն էլ շաքարի գին չէ: Կապի-  
 տալը հասարակական-արտադրական յարաբերութիւն  
 է: Նա պատմական-արտադրական յարաբերութիւն է»:

Ուրեմն երբ մէկը ջատագովում է նիւթի  
 գործարանային մշակումը, ապա սրանից  
 չի կարելի անմիջապէս եզրակացնել, թէ  
 նա կուսակից է կապիտալիստական ար-  
 դիւնաբերութեան: Պէտք է դեռ ուսումնասի-  
 րութիւնը շարունակել ու պարզել, թէ հեղինակը  
 հասարակական սրբալիսի յարաբերութիւնների հետ է  
 գուցորդում արդիւնաբերութիւնը: Կապիտալիստա-  
 կան արդիւնաբերութիւն առանց պրոլետարիատի գո-  
 յութեան հնարաւոր չէ. իսկ մենք արդէն տեսել  
 ենք ու գիտենք, որ Նալբանդեանի համար  
 իդէալական է այն հասարակարգը, որտեղ  
 սեփականագուրկ բանուոր դասակարգ գո-  
 յութիւն չունի: Հետևապէս երբ հայ հրա-  
 պարակախօսը գրում է նիւթի գործարա-  
 նային մշակման մասին, նրա յանձնարա-  
 բածը, ինչ ուղում է՝ լինի, յամենայն դէպս  
 կապիտալիստական արդիւնաբերութիւն  
 չէ, և ոչ էլ նրա քարոզը՝ բուժուազիայի  
 ջատագովումն:

Նալբանդեանը վերցնում է կապիտալիստական  
 հասարակութեան արտադրութեան միջոցները, մե-  
 քենայ, գործարան և այլն, և առանց կապիտալիստա-  
 կան յարաբերութիւնների մուծում մանր արտադրող-



ների բանուորացուրկ աշխարհը՝ կարծելով, որ այն միջոցները կարող են այստեղ յաջողութեամբ զարգանալ: Նալբանդեանն այս կէտում սխալուում է, որովհետև, ինչպէս վկայում են բուրժուազիայի իրէջողներն ու մասնաւորապէս Wakefield-ը և ինչպէս ապացուցում է գաղութների առաջին շրջանի կեանքը, մանր արտադրողների աշխարհում միաժամանակ նաև արդիւնաբերութիւնը զարգանալ չէ կարող, որովհետև նիւթի գործարանային մշակումն հնարաւոր է միայն կապիտալիստական հասարակութեան մէջ, որտեղ գոյութիւն ունի պրոլետարիատ, և կամ սոցիալիստական հասարակութեան մէջ, որտեղ արտադրութիւնն համայնացրած է, և բոլոր քաղաքացիներն ընկերներ են: Կրկնում ենք, Նալբանդեանն այս կէտում սխալուում է, բայց չէ դուաճանում իւր գասակարգի, գիւղացիութեան շահերին: Հայ հրապարակախօսն իւր քարոզած կարգերի մէջ մտցնում է սրանց համար խորթ տարր, բայց և այնպէս չէ դառնում բուրժուազիայի իրէջող: Երկու օրինակով պարզենք այս պարագոքսը:

Թոմաս Մորն «Ռևոլյուսի» մէջ նկարում է մի սոցիալիստական հասարակութիւն. այստեղ բոլորն աշխատում են, չկան պորտաբոյժներ ու աքնողներ, մարդիկ չեն բաժանուած դասակարգերի: Բայց նոյն Թոմաս Մորը միևնոյն գրուածքում պատմում է, թէ այն իրէջողական կղզում կային ստրուկներ, որոնք կատարում էին կեղտոտ, զգուելի աշխատանքները: Այժմ հարց է առաջ գալիս. ո՞ր մարդկանց շարքին է

պատկանում «Ռևոլյուսի» հեղինակը. նրանց, որոնք դասակարգերի բաժանուած հասարակութեան շատագուր են, թէ նրանց, որոնք դաւանում են ընկերական աշխատակցութեան վրայ հիմնուած հասարակարգ: Եթէ ի նկատի ունենանք այս փոքրիկ մանրամասնութիւնը, որ վերաբերում է ստրուկներին, այն ժամանակ Մորին պէտք է կանգնեցնենք առաջին շարքի մարդկանց կողքին, իսկ եթէ ուշադրութեան առնենք նրա ամբողջ քարոզը, նրան տեղ պէտք է տանք երկրորդ շարքում: Սակայն ո՞ր բանակի մարդ է մեծ ռևոլյուստը:

Անշուշտ սոցիալիստների, որովհետև ամբողջ «Ռևոլյուսի» շատագուրութիւն է այն կարգերի, որտեղ չկայ շահագործումն, չկան դասակարգեր, որտեղ բոլոր Ֆիզիքական աշխատանքները կատարում են քաղաքացիները: Եթէ Մորը կողմնակից լինէր ստրուկութեան գոյութեան, ապա շատ հասկանալի է, որ բոլոր Ֆիզիքական աշխատանքները կ'ձգէր ստրուկների վերայ և ոչ թէ միայն մի չնչին մասը — զգուելի աշխատանքները: Այժմեան սոցիալիստները չեն ընդունում Մորի ասածն ստրուկների մասին, որովհետև համոզուած են, թէ գիտութիւնները, տեխնիկան ու քիմիան, այնքան զարգացած կլինեն սոցիալիստական հասարակութեան մէջ, որ ամենակեղտոտ աշխատանքներն անգամ մաքուր կղարձնեն, և ուրեմն ոչ ոք իրաւունք չի ունենալ խտրութիւն դնելու աշխատանքների մէջ: Մորի ժամանակուայ կուլտուրան դեռ ևս հիմքեր չէր տալիս այսպիսի լաւատեսութեան համար, ուստի և «Ռևոլյուսի» հեղի-



նակն տկամայից, հակառակ իւր ամբողջ հեղինակութեան ոգուն, զգուելի աշխատանքները յասկացնում է սարուկներին: Մորը սխալուում է, երբ սոցիալիստական հասարակութեան մէջ մտցնում է սրա համար խորթ տարր, բայց և այնպէս մենք յեանորդներս ի նկատի ունենալով «Ուտոպիայի» ամբողջութիւնը՝ հեղինակին դատում ենք ամենայայտնի սոցիալիստների կարգում:

Երկրորդ օրինակ: Յոյն նշանաւոր կատակերգու Արիստոֆանի երկերից մէկում, «Վանանց ազգային ժողովի» մէջ հերոսուհին իւր սոցիալական դաւանանքն արտայայտում է հետևեալ խօսքերով:

«Ամենից առաջ ես ընդհանուր կգարձնեմ հողը, փողն ու ամեն տեսակ կայքերը: . . . Աղքատութիւնը ոչ ոքի չի հարկադրիլ աշխատելու. չէ՞ որ ամեն ինչ կգառնայ ընդհանուրի սեփականութիւն»: \*)

Արդ ի՞նչ անուանենք այս հերոսուհուն. ընդհանուր, թէ մասնաւոր սեփականութեան ջատագով. կոմմունիստ, թէ ինդիւիդուալիստ: Եթէ հաշուի առնենք այն խօսքերը, թէ ամեն ինչ կգառնայ ընդհանուրի սեփականութիւն, այն ժամանակ նրան պէտք է անուանենք կոմմունիստ, իսկ եթէ ի նկատի ունենանք, որ նրա դաւանած կարգերում գոյութիւն ունի փող, ուրեմն և փոխանակութիւն, ուրեմն և անշատ անտեսութիւններ, ապա հերոսուհուն պէտք է ինդիւիդուալիստ կոչենք: Ո՞ւր կողմն է ձգտում այս կնոջ սիրտը, եթէ չասենք՝ լեզուն:

\*) Р. Пельманъ, Կր. 296:

Անշուշտ կոմմունիստների, որովհետև հերոսուհին ամեն ինչ, նոյն իսկ փողը, ընդհանուր է յայտարարում, բայց չիմանալով, թէ փողն անհրաժեշտ է միայն ապրանքային արտադրութեան ժամանակ, տեղ է տալիս նրան կոմմունիստական հասարակութեան մէջ, որտեղ փոխանակութեան, ուրեմն և փողի կարիք չկայ: Յոյն կինը սխալուում է, բայց չէ դաւանում ինդիւիդուալիստ: Նրա ձգտումը պարզ է, իսկ զիտութիւնը՝ քիչ, ուստի և նա չէ կարողանում իւր աշխարհահայեացքն ազատել ինդիւիդուալիստական տարրերից:

«Ուտոպիայի» հեղինակի ու Արիստոֆանի հերոսուհու նման Նալբանդեանն էլ իւր դաւանած կարգերում տեղ է տալիս չզուգորդուող, խորթ տարրի, բայց այս տարրը չէ փոխում նրա աշխարհահայեացքի ամբողջութեան դասակարգային բնոյթը: Հայ հրապարակախօսի քարոզած ազգային արդիւնաբերութիւնը շատ հեռու է կապիտալիստական արդիւնաբերութիւնից:

XIV.

Նալբանդեանը չէ բաւականանում միայն նրանով, որ ժողովուրդը կարողանայ իւր օրական ապրուստը հայթայթել, այլ ցանկանում է, որ այս երկրագործ մասսան շատ աւելի արտադրէ, քան կարող է սպառել: Նրա իղձն այն է, որ զիւզացիութիւնը հարստանայ վաճառելով իւր աշխատանքի յաւելեալ արդիւնքը:



«Հայոց հասարակ ժողովուրդը, — գանգատուում է հեղինակը, — աղքատ է և չունենալով ոչինչ նիւթական կարողութիւն՝ հազիւ հազ սերմանում է և հրնձում այնքան, որքանը նրա ապրուստը, զիարդ և իցէ, պիտի կարողանայ ապահովել: Նա չէ կարող աւելի ցանել, որովհետև ոյժ չունի: Ապա եթէ հայ շինականի ձեռքը մի փոքր դրամ անցանէ, եթէ նա յոյս ունենայ, որ իւր աշխատանքը պիտի գնահատուի, եթէ նա տեսնէ իւր մշակութեան պտուղը, ո՞չ ապաքէն կրկնապատիկ կսկսի ցանել, կրկնապատիկ հնձել»: \*)

Հայ հրապարակախօսը կամենում է, որ գիւղացին արտադրէ շուկայի համար: Այս տեսակէտից խաչատուր Աբովեանն ու Միքայէլ Նալբանդեանը կատարեալ հակոտնեաներ են: Մինչդեռ Աբովեանը ջատագով է տնային փակ տնտեսութեան, որն արդիւնքներն արտադրում է ընտանիքի սեփական սպառման համար, մինչդեռ «Վէրք»-ի հեղինակը ոգևորում է այնպիսի կարգերով, որտեղ փոխանակութիւնը գերակշռող դեր չունի, մինչդեռ գիւղական վէպի հիմնադիրը քեթխուղայի բերանով արհամարհանք է յայտնում փողին ու փողասիրութեանը, Նալբանդեանն, ընդհակառակը, կողմնակից է ապրանքային արտադրութեան ու փողային տնտեսութեան զարգացման: Աբովեանը հին մարդ է. նրան հետաքրքրում է լիքը մառանն ու առատ սեղանը: Նալբանդեանը նոր դարի զաւակ է.

\*) Մ. Նալբանդեանի երկերը, Բ. եր. 348:

սա երազում է ընդարձակ շուկայ ու լիքը քսակ: Սակայն երկուսն էլ դասակարգային աշխարհահայեացքով նոյն բանակի մարդիկ են. երկուսի իդէալն էլ գիւղն է, գիւղացին ու երկրագործութիւնը: Աբովեանը բնական տնտեսութեան շրջանի հայ գիւղացու իդէոլոգն է, իսկ Նալբանդեանը՝ փողային տնտեսութեան:

Կարող է պատահել, որ ոմանք Նալբանդեանի մասին այս տողերը կարդալով կարծեն, թէ մենք հէնց մեր բերանով ապացուցում ենք մեր ցանկացածի հակառակը: «Նալբանդեանը, — կասեն, — ջատագով է այնպիսի գիւղացիութեան, որն արտադրում է շուկայի համար: Այս չէ՞ նշանակում արդեօք, որ նա կողմնակից է գիւղական բուրժուազիայի, որն ընդհանուր բուրժուազիայի ստորաբաժանումն է միայն: Արդեօք արդիւնք վաճառող հարուստ գիւղացին շատ է տարբերում ապրանք վաճառող խոշոր արդիւնաբերողից: Այս տարբերութիւնն արդեօք լոկ աշխարհագրական ու քանակական չէ, և նրանից չէ առաջանում, որ մէկը գործում է գիւղում, իսկ միւսը՝ քաղաքում, մէկը շահում է հարիւրներ ու հազարներ, իսկ միւսը՝ բիւրեր ու միլիոններ»:

Սրան ի պատասխան կարող ենք ասել, որ եթէ մանր գիւղացին յաջող հանգամանքներում տիրանայ հազարների, մինչդեռ արդիւնաբերողը զժուարին պարագաներում հազիւ կարողանայ հարիւրներ վաստակել, էլի մանր գիւղացին կիմայ աշխատաւոր, իսկ



արդիւնաբերողը՝ բուրժուա, և նրանց հարստութիւնները կը տարբերուեն որակապէս: Երբ մանր արտադրողը, ներկայ դէպքում գիւղացին, ունի արտադրութեան սեփական միջոցներ, և նրա տնտեսութեանը մասնակից չէ վարձու բանուորը, այն ժամանակ նրա ձեռք բերած հարստութիւնը, որքան էլ մեծ լինի, կապիտալ չէ, որովհետև ստացւում է միմիայն սեփական աշխատանքով: Իսկ արդիւնաբերողի հարստութիւնը, որքան էլ փոքր լինի, կապիտալ է, որովհետև արտադրւում է վարձու բանուորի աշխատանքի միջոցով: Մանր գիւղացու հարստութիւնը «արդար հաց» է, որովհետև նրա մէջ չկայ ուրիշ քրտինքի և ոչ մի կաթիլը, մինչդեռ բուրժուազիայի հարստութիւնը բանուորի արիւնով շագախուած մի գգուելի թթիւմոր է: «Երկրագործութեան» հեղինակի իգէալն է ոչ թէ գիւղական բուրժուազիան, այլ հարուստ, բայց աշխատաւոր գիւղացիութիւնը:

Ասացինք, որ ըստ Նալբանդեանի՝ գիւղացին պէտք է արտադրէ շուկայի համար, և այս դէպքում նրան հարկաւոր է դրամ:

«Բայց խնդիրն այստեղ է, — ասում է հեղինակը, — թէ ո՞վ տայ երկրագործին այն դրամը, որ հարկաւոր է նորա լքեալ բազուկները զօրացնելու համար»: \*)

\*) Նոյնը, ևր. 348.

Ո՞վ պէտք է երկրագործի չորացած արտը ցօղէ մետաղեայ անձրևով:

«Վաճառականը, — պատասխանում է հայ հրապարակախօսը, — կամ փոքր ի շատէ կարողութեան տէր մարդը: . . . Վաճառականը կարող է ամենայն վստահութեամբ հում նիւթեր առնուլ հայ երկրագործից, ապրանք ապսպարել նրան, մանր մուշկ գումարներ տալ յառաջուց այս ու այն շինականին և հունձից յետոյ ապրանք ստանալ փոխարէն: . . . Այս ճանապարհով միայն ազգը կարող է բարուոքել իւր տնտեսական վիճակը, այս ճանապարհով նիւթական ոյժը կանցնէ ազգի ձեռքը, ազգը կզօրանայ և երկրագործը և վաճառականը և կարողութեան տէր մարդը օրըստօրէ կհարստանան»: \*)

«Երկրագործութեան» հեղինակը այս խնդրում էլ ունի կարապետներ: Անտիկ աշխարհի, Արևմտեան Եւրոպայի ու Ռուսաստանի հասարակական մտքի զարգացման պատմութիւնից յայտնի է, որ ժողովրդական մասսաների տնտեսութիւնը բարուոքելու համար շատերը յոյսերը դրած են եղել պետութեան վրայ: Շատերից յիշենք Արիստոտելին Յունաստանում, Լուի Բլանին Ֆրանսիայում, Լասսալին Գերմանիայում ու Չերնիշևսկուն Ռուսաստանում: Ըստ Արիստոտելի՝ պետութիւնը իւր աւելորդ գումարներէ պէտք է օժանդակութիւն տայ չքաւորներին, որպէս զի սրանք կարողանան պարապել մանր առուտուրով և կամ հող ձեռք բերեն մշակելու համար:

\*) Նոյնը, ևր. 349:



Լուրի Բլանն ու Լասսալը պահանջում են, որ պետութիւնը անհրաժեշտ դրամական միջոցներ շնորհէ բանուորներին արտադրական միութիւններ հաստատելու համար: Եւ վերջապէս Չերնիշևսկին գիւղական համայնքը (община) պահպանելու խնդրում ու քաղաքական այլ հարցերում ժողովրդի համար նպաստաւոր գործողութիւններ էր ակնկալում միապետական կառավարութիւնից: Այժմ այս պիսի յոյսերը ու առաջնահայեցիկ են համարւում, որովհետեւ իբրև ճշմարտութիւն է ընդունւում այն խօսքը, թէ պետութիւնը աիրող դասակարգի գործերը կառավարող մի կոմիտեա է, և ուրեմն նրանից նոյն դասակարգի շահերին փաստող գործողութիւններ սպասել չէ կարելի:

Հայ հրապարակախօսն իւր մտածողութեամբ մօտ է վերոյիշեալ հեղինակներին ու հասարակական գործիչներին. թէև նա իւր յոյսը չէ դնում պետութեան վրայ և չէր էլ կարող դնել, որովհետեւ հայ պետութիւն գոյութիւն չունէր, բայց ժողովրդի համար օգտակար գործողութիւններ սպասում է մի այնպիսի դասակարգից, որը անտեսական գործունէութեան մէջ չէ դեկավարւում և չէ էլ կարող դեկավարուել ժողովրդի շահերով: Վաճառական ու արդիւնաբերող դասակարգը ծառայում է իւր շահերին, իսկ Նալբանդեանը նրան համոզում է սպասուել երկրագործութեանը:

Գիւղացու, միմիայն գիւղացու արտադրած արդիւնքներն անփոփոխ կամ մշակելով հեռաւոր շու-

կաները հասցնել և շինականի լքեալ բազուկները դորացնելու համար նախապէս փող դնել նրա ափի մէջ, ահա այն պահանջները, որ անում է հայ հրապարախօսը վաճառականներից:

Նալբանդեանի դաւանած կարգերում դասակարգերի դիրքերն արմատական փոփոխութեան են ենթարկւում. առաջինները լինում են վերջին, իսկ վերջիններն առաջին. ստորին դասակարգը—գիւղացիութիւնը դառնում է բարձր դասակարգ, իսկ բարձրը—առևտրական ու արդիւնաբերող—դասակարգը դառնում է ստորին դասակարգ: Հայ հրապարակախօսն Իսահակի նման իրաւունքը տալիս է կրտսեր Յակոբին, իսկ աւագ Եսաւին պատուիրում է ծառայել եղբօրը:

XV.

Այժմ ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրում ենք մի ուրիշ ու վերջին կէտի վերայ, որ նոյնպէս կուսական է մնացել մինչև այժմ, որովհետեւ, ինչպէս երևում է, հայ հրապարակախօսի երկերն ուսումնասիրողներն իրենց առաջ ընկած հազուագիւտ գոհարը դատարկ գարեհատի տեղ են ընդունել: Այս կէտը թէև նոր փաստ չէ աւելացնում Նալբանդեանի վարդապետութեան դասակարգային ոգին որոշելու համար, բայց նրա աշխարհահայեացքին մի չափազանց ուշադրաւ երանգաւորումն է տալիս: Խօսքն այն մասին է, թէ ինչն է հարստութիւն կազմում,



և որպիսի հանգամանքներում մի ժողովուրդ կարող է հարստանալ:

«Ուր չկայ դուրս արտադրող գորուծիւն, — գրում է հեղինակը, — որ իւր կարգով դէպի ներս պիտի գրաւէր դուրսի հարստութիւնը, այստեղ մի ընկե-  
րութեան անդամ ուրիշ կերպ չէ կարող հարստանալ, եթէ ոչ նոյն ընկերութեան միւս անդամների հաշ-  
ուով: Եւ այդ հարստութիւն չէ, այլ պատահական հակումն հարստութեան կշռի երբեմն դէպի այս և երբեմն դէպի այն կողմը: Այսօր դու ես հարուստ, վաղը ես կլինիմ և այն ժամանակ քո հարստութիւնը անպատճառ պիտի նուազի»: \*)

Այս հատուածից երևում է, որ Նալբանդեանի աչքում աշխատանքի նպատակայարմար գործադրու-  
թիւնն ինքն ըստ ինքեան արժէք չունի, որովհետև չէ մեծացնում ժողովրդի հարստութիւնը: Որքան էլ զարգացած լինին երկրագործութիւնը, արհեստներն ու կամ արդիւնաբերութիւնը, այնուամենայնիւ սրանք մի ազգ հարստացնել չեն կարող, եթէ նրանց ար-  
դիւնքները չեն արտահանւում արտասահման, և փո-  
խարէնը փող չէ ներմուծւում: Ներքին շուկան, ներ-  
քին փոխանակութիւնը նշանակութիւն չունեն, որով-  
հետև այս դէպքում նոր դրամ չէ մտնում հասարա-  
կութեան մէջ և մէկը հարստանալ կարող է միմիայն ի հաշիւ հարեանի: Ժողովրդի հարստութեան աղբիւրն արտաքին առևտուրն է, աւելի ճիշտ՝ արտաքին ար-  
տահանող առևտուրն է, որովհետև արտահանած ապ-

\*) Նոյնը, Եր. 379—380:

րանքի փոխարէն փող է ներս բերում հասարակու-  
թեան մէջ. այսպիսի առևտուրով պարապելու հա-  
մար անհրաժեշտ է արտահանելու արդիւնքներ պատ-  
րաստող արտադրութիւն: Արդիւնքը, ապրանքն ինքն  
ըստ ինքեան հարստութիւն չէ. իսկական հարստու-  
թիւնը փողն է, ոսկին ու արծաթը: Արդիւնքը, ապ-  
րանքը լոկ միջոցներ ու ոյժեր են, որոնցով հնարա-  
ւոր է քաշել ու ներս բերել գրսի հարստութիւնը —  
փողը, ոսկին կամ արծաթը: Հետևեալ տողերի մէջ  
հեղինակն աւելի է պարզում իւր միտքն օրինակով,  
որից իմանում ենք, որ նա հարստութիւն ասելով  
իսկապէս փողն է հասկանում:

«Աւելի հասկանալի շինելու համար առարկան  
բացատրենք մեծը և ընդհանուրը փոքրի և մասնա-  
ւորի կերպարանքով: Գնենք թէ քսան հոգի մեք ապ-  
րում ենք մի տեղում և վաճառականութիւն ենք առ-  
նում մեր մէջ: Մենք ամենքս գործում ենք առան-  
ձին առանձին, իւրաքանչիւր մարդ իւր օգտի հա-  
մար, և մեզնից իւրաքանչիւրը տարբեր կարողու-  
թիւն ունի, մինը շատ, միւսը փոքր և այլն, և մեր  
բոլորի ունեցած կարողութիւնքը իրար վրայ բար-  
դելով գնենք թէ ստանում ենք հազար ոսկու մի  
դրամագլուխ: Արդ հարցնում ենք, երբ որ մեր բո-  
լորի գործողութիւնը այն հազար ոսկու վրայ է, երբ  
մեր ձեռքում չկայ մի ոյժ, որ կարող լինէր մեր  
քսանից դուրս եղած արծաթը ներս բերել մեր մէջ,  
մեզնից մինը կարող է հարստանալ առանց քսանի  
շահին զիպչելու: Ո՞չ ապաքէն եթէ մեզնից մինը  
իւր ունեցածից աւելի մի հարիւր ստանայ, մեզնից



միւս մինը պիտի տուժէ այդ հարիւրը: Եւ այս հարիւր ոսկին երևութական և առժամանակեայ մի վաստակ է, քանզի ընդհանրութիւնը չունի հարստութիւն, և շահուողը ընդհանուրի հաշուով շահուեցաւ. քանզի նոր արծաթ չմտաւ ընդհանրութեան մէջ, այլ մինից անցաւ դէպ ի միւսը, որ վաղը կանցանէ դարձեալ դէպ ի մի այլ միւսը»:<sup>\*</sup>)

Նալբանդեանը մերժում է ներմուծող առևտուրը, պիտարակում է Եւրոպայից բերած մանուֆակտուրային ապրանքներով վաճառականութիւն անելը, որովհետև «ձեռագործի (մանուֆակտուրայի. թ. Ա.) վաճառականութիւնը չէ դարձնում դէպի մեր ազգը դրամի շրջանառութիւնը» (եր. 350): Հայ հրապարակախօսն առաջարկում է երկրագործական արդիւնքներ արտահանող վաճառականութիւնով զբաղուել, որովհետև այս դէպքում «վաճառականը ոչ միայն կազատուի Եւրոպացոց համար ախու վախով և բիւր նեղութեամբ գործ կատարելուց, ոչ միայն ինքնուրոյնաբար կկանգնի իւր ոտքի վրայ, այլ և երոպական արծաթը և ոսկին ներս կհոսեցնէ ազգի մէջ և ինքը կշահուի տասնապատիկ աւելի և մեծ ու մեծ շահ կբերէ ազգի ընդհանրութեան, որ է ազգի հիւքը, լծակը, շարժարանը: Ընդհանրութիւնը կապահովուի, քանզի զօրութիւնը կգրաւէ իւր կողմը, քանզի Եւրոպան կարօտ է նորան, քանզի երկրի բերքերը դուրս տալով իւր մէջ պիտի դարձնէ դրամի շրջանառութիւնը»:<sup>\*\*</sup>)

<sup>\*</sup>) Նոյնը, եր. 380:

<sup>\*\*</sup>) Նոյնը, եր. 357:

Սոյն հատուածներն առանց երկրայութեան նշոյլ անգամ թողնելու ապացուցում են քաղաքատնտեսութեան պատմութեանը նոյն իսկ հարևանցօրէն ծանօթ մարդուն, որ «Երկրագործութեան» հեղինակը կրկնում է տնտեսագիտական յայտնի ուսմունքի— մերկանտիլիզմի հիմունքները: Մեր այս խօսքերի ճշմարտութիւնն ակնբերէ դարձնելու համար պէտք է երկու խօսք սսենք մերկանտիլիզմի մասին:

Տնտեսագիտական յիշեալ դպրոցը յատուկ նշանակութիւն էր տալիս արտաքին առևտուրի միջոցով փողի ներմուծմանը և անուշադրութեան մատնում ներքին առևտուրը, որովհետև սա իբրև թէ չէր նպաստում ազգի հարստանալուն: Սկզբում մերկանտիլիստները հակառակ էին ներմուծող առևտուրին, որովհետև, ասում էին. ներմուծած ապրանքի փոխարէն փող է դուրս գնում երկրից: Բայց յետին շրջանի մերկանտիլիստներն արդէն կողմնակից էին առևտրական դուրսակշռին (բալանս), այսինքն թոյլատրում էին նաև ներմուծող առևտուրը, բայց այն պայմանով, որ արտահանութիւնն աւելի շատ լինէր, քան ներմուծումը: Այս դէպքում աւելորդ արտահանածի փոխարէն դրսից ազգի մէջ փող կմտնէր, այսինքն ազգը կհարստանար. Ընդհակառակը եթէ ներմուծումն արտահանութիւնից շատ լինէր, աւելի ներմուծածի փոխարէն ազգը պէտք է դուրս տար փող, ուրեմն կաղքատանար:



Գլխաւորապէս XVI ու XVII դարերում մերկանտիլիզմն ունեցաւ բազմաթիւ ներկայացուցիչներ Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Սպանիայում, Իտալիայում ու նոյն իսկ Ռուսիայում: Այս ուղղութեան նշանաւոր ներկայացուցիչներէն է անգլիացի Քոմաս Մենը, որի գրքերէն մէկը անունը — «Անգլիայի գանձերն օտարերկրեայ առևտուրի մէջ» — որոշում է մերկանտիլիզմի էութիւնը: 1664 թուին լոյս աեսած այս գրքի մասին Ադամ Սմիտը գրում էր.

«Այս աշխատութեան վերնագիրը — «Անգլիայի գանձերն օտարերկրեայ առևտուրի մէջ» — դարձաւ ոչ միայն Անգլիայի, այլ և միւս բոլոր առևտրական երկիրների ժողովրդական անտեսութեան հիմնական օրէնք: Ներքին կամ անային առևտուրը, որի նոյնպիսի կապիտալն երկրին աւելի մեծ օգուտ է տալիս, համարուում էր օտարերկրեայ առևտուրից ցած: Ըստ այս կարծիքի՝ ներքին առևտուրն երկրի մէջ չէր ներս բերում փող և ոչ էլ դուրս հանում: Եւ ուրեմն այս առևտուրը չէր կարող ոչ հարստացնել և ոչ էլ աղքատացնել»: \*)

Այժմ բերենք այս դպրոցի գրականութիւնից մի քանի հատուածներ, որոնք մերկանտիլիստական մաքեր պարունակելով անմիջապէս երևան կհանեն այն մեծ նմանութիւնը, որ կայ սրանց ու Նալբանդեանի քարոզած գաղափարների միջև:

«Չի կարելի ժխտել, — գրում էր յայտնի վերա-

\*) В. СВЯТЛОВСКІЙ, стр. 152:

նորոգիչ գոկտոր Մարտին Լութերը 1524 թուին լոյս աեսած և վաճառականութեան ու վաշխառութեանը նուիրուած մի գրքում, — որ առքն ու վաճառքն անհրաժեշտ գործողութիւններ են, առանց որոնց չի կարելի կառավարուել. առանձնապէս այս ճիշտ է այն առարկաների վերաբերմամբ, որոնք ծառայում են անհրաժեշտ կարիքներին, սնափառութեանը բաւարարութիւն տալու համար. չէ՞ որ նահապեաները նոյնպէս վաճառում էին ու գնում անասուն, բուրգ, հացահատիկ, իւղ, կաթ ու այլ բարիքներ: Սրանք Աստու պարգևներն են, որ նահանում է երկրից ու բաժանում մարդկանց: Բայց արտասահմանեան առևտուրը, որ ապրանքներ է ներմուծում կալկաթայից, ինչպէս օրինակ՝ մետաքս, սակեղէն իրեր ու համեմներ, որոնք ծառայում են շաշխութեան ու ոչ թէ օգտի համար և դուրս են ծծում երկրից ու մարդկանցից փող, — այսպիսի առևտուրը թոյլատրելի չէ: ... Աստուած իրաւունք է տուել, — ծաղրում է Լութերը, — որ մենք գերմանացիներս մեր սակին ու արծաթը տանք ուրիշ երկիրների, ամբողջ աշխարհը հարստացնենք, իսկ ինքներս աղքատ մնանք: Անգլիան շատ աւելի քիչ սակի կուսենար, եթէ մենք նրան թողնէինք իւր գործուածքները. Պորտուգալիայի արքան էլ քիչ սակի կուսենար, եթէ նրան թողնէինք իւր համեմները: Եթէ մարդ հաշուէ, թէ գերմանական երկիրներից առանց կարիքի ու պատճառի որքան փող է արտահանուում միայն Ֆրանկֆուրտի շուկան, ապա կգարմանայ, թէ ինչպէս է



նոյնիսկ մի դրոշ մնում գերմանական երկիրներում»։ \*)

«Ոսկու պակասութեան ընդհանուր ու հեռաւոր պատճառն այն է, —ասում է Մարտին Լութերից մօտ մի դար յետոյ 1622 թուին անգլիացի Միսսելգենը «Անգլիայի ազատ առետուրը» գրքում, — որ մենք չափազանց շատ ենք գործածում օտար-երկրեայ ապրանքներ, որոնք փոխանակ մեզ համար օգտակար լինելով՝ վնասակար են հանդիսանում, որովհետեւ գրկում են մեզ այնքան փողից, որ կարող էր ներմուծուել այս գատարկ բաների փոխարէն: Մենք շատ մեծ քանակութեամբ սպառում ենք Սպանիայի, Ֆրանսիայի, Մերձհոնոսեան շրջանի ու արևելեան երկիրների գինի, Սպանիայի շամիչ, Արևելքի կորինթեան քիշմիշ, Գեննեզաուի նուրբ ու կոպիտ կտաներ, Իտալիայի մետաքսեայ գործուածքներ, Արևմտեան Հնդկաստանի համեմներ. — այս բոլորը մեզ համար անհրաժեշտ կարիք չէ, բայց մենք գնում ենք այս բոլորը կանխիկ փողով»։ \*\*)

«Յայտնի է, — գրում էր Ռուսաստանի նշանաւոր մերկանտիլիստ բարոն Լիւբերասը, այն Լիւբերասը, որից ազգուելով Պետրոս Մեծը գործնականապէս պատուաստում էր մերկանտիլիզմը Ռուսաց աշխարհում, — որ մի քանի երկիրներում թէև մեծ առետուր են անում, բայց հպատակ-

\*) К. Марксъ. «Къ критику политической экономіи» пер. П. П. Румянцева, СПб, 1907, стр. 123;

\*) Նոյնը, հր. 122:

ները քիչ են օգտւում նրանից. Այս պատահում է այն ժամանակ, երբ բնակիչներն իրենց արդիւնքները հում են վաճառում. այս դէպքում ուրիշ երկիրների հպատակները մշակում են և ստանում մեծ օգուտ, մինչդեռ այս արդիւնքների տէրերը չարքաշ կեանք են վարում: Կամ այս պատահում է այն ժամանակ, երբ մի երկրում օտար ապրանք աւելի են սպառում, քան կարող են փոխարէնը հատուցանել տեղական արդիւնքներ արտահանելով. այս դէպքում բաւանսը պէտք է վճարել փողով, և երկիրն անհրաժեշտ օրէն կսկսէ հետզհետէ աւելի ու աւելի աղքատանալ»։ \*)

Կարծում ենք, որ Գերմանիայի, Անգլիայի ու Ռուսաստանի յիշեալ երեք հեղինակների—Մարտին Լութերի, Միսսելգենի ու բարոն Լիւբերասի մերկանտիլիստական հատուածները, այլ և Ադամ Սմիտի վկայութիւնը գուգադրելով հայ հրապարակախօսի ասածների հետ՝ կարելի է յանգել միայն մի եզրակացութեան, այն է, որ ՆԱԼԲԱՆԳԵԱՆԸ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՐՄԱՏՈՒԹԵԱՆԸ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀԱՏԵԱՅԳՆԵՐՈՎ ՄԻ ԱՆԿԱՍԿԱԾԵԼԻ ՄԵՐԿԱՆՏԻԼԻՍ է:

XVI

Առաջին հայեացքից կարող է թուալ, որ հայ հրապարակախօսի մերկանտիլիստ լինելն այնքան էլ ուշադրութեան արժանի իրողութիւն չէ: Մերկանտի-

\*) В. Святловскій стр. 164:



լիստներ շատ են եղել,—կբացականչեն անտարբե-  
րութեամբ,—Նալբանդեանն էլ նրանցից մէկը: Բայց  
ինդիքն էլ հէնց այս է, որ հայ մերկանտիլիզ-  
մը անտեսագրիտական յիշեալ դպրոցի մի  
նոր, մինչև այժմ անյայտ ճիւղաւորու-  
թիւնը լինելով այս ուղղութեան պատմու-  
թիւնը հարստացնում է ոչ միայն քանա-  
կապէս, այլ և որակապէս:

Նախ քան սասճներս ապացուցանելը հարկաւոր  
է մի փոքրիկ նախապարասութիւն: Բնապատմա-  
կան ճշմարտութիւն է, որ իւրաքանչիւր աշխարհա-  
գրական դօտի ունի իւր յատուկ բուսականութիւնը.  
նոյնպիսի մի ճշմարտութիւն է նաև այն, որ երբեմն  
միևնոյն բոյսը կարող է աճել երկու դօտում էլ: Ըստ  
երևոյթին այս հակասութիւն է. բայց այս հակասու-  
թիւնը լուծում է հեշտութեամբ, երբ ի նկատի ենք  
ունենում, որ մի բոյս ուրիշ դօտի փոխադրելով  
զգալի փոփոխութիւնների է ենթարկում: Բոյսի մի  
դօտուց միւս դօտին անցնելը ոչ միայն չէ հակա-  
սում բնապատմական հիմնական ճշմարտութեանը, թէ  
իւրաքանչիւր դօտի ունի իւր յատուկ բուսականու-  
թիւնը, այլ, ընդհակառակն, անհերքելի կերպով հաս-  
տատում է նոյն թեզիսը, որովհետև բոյսի բոլոր մաս-  
երի փոփոխութիւնը՝ լինելով հետևանք նոր միջա-  
վայրի՝ անփոփոխ վիայութիւն է նոր դօտու ազդե-  
ցութեան, ազդեցութիւն, որ ձգտում է դօտուն հա-  
մապատասխան բուսականութիւն ստեղծել:

Ճիշտ նոյնպիսի երևութական հակասութիւն ու  
իրական հաշտութիւն գոյութիւն ունի նաև իդէոլո-

գիական աշխարհում: Իդէոլոգիաների պատմութիւնից  
յայտնի է, որ երբեմն միևնոյն ուղղութիւնը տարբեր  
ժամանակներում հանդէս է գալիս իբրև զանազան  
գասակարգերի իդէոլոգիա. այն ուսմունքը, որ այսօր  
ուղևորում է շահագործողին, վաղն գմայլեցնում է  
նրա զոհին: Այս խօսքերն ըստ երևոյթին հակասում  
են այն աշխարհայեացքին, ըստ որի իւրաքանչիւր  
գասակարգ ունի յատուկ հոգեբանութիւն, իդէոլո-  
գիա, որը խստիւ տարբերում է հասարակական միւս  
խմբերի իդէոլոգեաներից: Բայց իրօք այսպեղ ոչ մի  
հակասութիւն չկայ. ճիշտ է այն, որ իւրաքան-  
չիւր գասակարգ ունի յատուկ իդէոլոգիա,  
սակայն ճիշտ է նաև այն, որ իդէոլոգիան կա-  
րող է անցնել գասակարգից գասակարգ:  
Թուացող հակասութիւնը վերանում է բոլորովին,  
երբ յիշում ենք, որ ամեն իդէոլոգիա գասա-  
կարգից գասակարգ անցնելով մեծ փոփո-  
խութիւններ է ենթարկւում, ստանում է  
նոր կերպարանք այնպէս, ինչպէս արեգակի լոյսն  
երանգաւոր ապակիների միջից անցնելով զանազան  
գոյներ է ստանում:

Յոյց տալու համար, որ, յիրաւի, իդէոլոգիա-  
ներն անցնում են գասակարգից գասակարգ և այս  
գէպքում մեծ փոփոխութիւններ կրում, սոցիոլո-  
գիական նոր բովանդակութիւն ստանում,—բաւական  
է մասնանիշ լինել միայն քրիստոնէութեան վերայ:  
Ահա մի ուսմունք, որ առաջ գաւանում էին ձկնորս-  
ներն ու մուրացիկ չքաւորները, իսկ այժմ՝ նրանք,  
որոնց մի մասի վրայ աւելի հարստութիւն կայ, քան



ամբողջ Երուսաղէմի համայնքում. ահա մի ուսմունք, որ առաջ բուն էր դրել միջին կատակոմբաներում ու խարխուլ խրճիթներում, իսկ այժմ բազմում է Վատիկանի ապարանքում ու Երկրակալների պալատներում. ահա մի վարդապետութիւն, որի հետևողները հնում չարին չէին հակառակում, իսկ այժմ ոգևորւում են աշխարհակուլ միլիտարիզմով. և վերջապէս ահա մի կրօն, որ երբեմն ունևորներին դժուր էր արտորում և քարոզում էր շապիկը տալ ընկերոջը, իսկ հիմայ դաշնակցելով աշխարհիս հզօրների հետ՝ բնական ու արդար է յայտարարում այն կարգերը, որտեղ անթիւ բիւրաւորների տանջում, զոհում ու մաշկում են իբրև անբան սպանդների: Աւետարանը դաւանել են և՛ աէրն ու ստրուկը, և՛ ագնուականն ու ճորտը, և՛ վարպետն ու աշակերտը, և՛ արդիւնաբերողն ու բանուտը, բայց սրբան տարբեր է սրանց իւրացրածն Աւետարանից: Մի տեղ սա մասնաւոր սեփականութիւնը հովանաւորող մատեան է, մի ուրիշ տեղ՝ ընդհանուր սեփականութիւնը շատագոյնող դիրք. այնտեղ սրանով բռնութիւնն են արդարացնում, այստեղ ադատութիւնը փառաբանում. մերթ սա ուղեկից է աշխարհակալի արնածոր սրին, ինկուրիզիտորի բոցավառ խարոյկին ու դահճի բարձրագիր կառափնարանին, իսկ յաճախ էլ հանգչում է հալածեալի, վաստակեալի ու բեռնաւորի հաւատացող, յուսացող ու սիրող կրօնքի վրայ...

Քրիստոնէութիւնը միակ օրինակը չէ իդէոլոգիաների պատմութեան մէջ. կրօնական, փիլիսոփայական, գրական և այլն շատ ուղղութիւններ կան,

որոնք տարափոխիկ անցեալ են ունեցել: Այսպիսիներէց է նաև մերկանտիլիզմը, որ միշտ ուսմէն ուրեք մի են սոյն կերպարանքով չէ երևացել: Այսպէս օրինակ՝ յիշեալ ուղղութիւնը այլ բնաւորութիւն է ունեցել Արևմտեան Եւրոպայում և բոլորովին այլ՝ Ռուսաստանում:

Արևմտեան Եւրոպայում մերկանտիլիզմը հանդէս եկաւ այն ժամանակ, երբ նոր գտնուած ցամաքներն ու նոր ճանապարհները կրօնական ապրանքների համար ընդարձակ շուկայ էին բաց արել: Արդիւնքներն ապրանք դարձել էին, բայց բանուտբաղան ոյժը՝ դեռ ևս ոչ: Իշխում էր երկրագործական ու արհեստաւորական արտադրութիւնը, կապիտալիստական արդիւնաբերութիւն դեռ ևս չկար: Բուրժուազիան օգուտ քաղում էր ոչ թէ արտադրութիւնից, ոչ թէ բանուորի ոյժը գործադրելով ու յաւելեալ աշխատանք խլելով, այլ փոխանակութիւնից, ուրիշների արտադրած արդիւնքները վաճառելով: Ահա այս դրութեան պատկերացումը մարդկանց դիտակցութեան մէջ, վաճառական դասի պրակտիկան թէորիայի մէջ հանդէս էր գալիս մերկանտիլիզմի կերպարանքով: Մերկանտիլիզմն Արևմտեան Եւրոպայում առևտրական բուրժուազիայի իդէոլոգիան էր:

Բոլորովին ուրիշ պատկեր էր ներկայացնում Ռուսաստանն այն ժամանակ, երբ այստեղ սկսեցին մուտք գործել մերկանտիլիստական գաղափարները: Ազգաբնակչութեան հսկայ մեծամասնութիւնն ապրում



էր գիւղերում բնական անտեսութիւն վարելով. փո-  
 զային անտեսութիւնը նոր նոր էր սկսում ծիւեր  
 արձակել հասարակութեան մէջ. քաղաքները շատ  
 չնչին ազդեցութիւն ունէին. միջազգային շուկայում  
 ուսական արասահմանեան առուտուրի անունը չէր  
 լսուում. չկար առևտրական բուրժուազիա, որն Արև-  
 մուտքում արգէն ստրի էր կանգնել և շուտով իբրև  
 նոր Գաւիթ մենամարտի էր դուրս գալու հսկայ Գո-  
 դիաթի—հնադարեան ազնուականութեան դէմ: Հաս-  
 կանալի է, որ այսպիսի պայմաններում ուս մեր-  
 կանտիլիզմը բոլորովին այլ բնոյթ պէտք է ունե-  
 նար, քան Արևմտեան Եւրոպայում:

«Պետրոս Մեծը,—գրում է ուս անտեսագէտ  
 Վ. Սուեաալովսկին,—կամենալով մերկանտիլիզմի ու-  
 ղիով ընթանալ՝ ուրիշ հնար չունէր գործադրելու,  
 քան եթէ այն պատուաստել կառավարութեան մի-  
 ջոցներով ու զարձնել կենդրոնական իշխանութեան  
 մենաշնորհ: Այսպիսով մերկանտիլիզմը մեզանում  
 չէր զարգանում բնական ճանապարհով, այլ արհես-  
 տական կերպով պատուաստուում էր, այսինքն բոլո-  
 րովին այլ նպատակների ու խնդիրների համար էր  
 նշանակուում և ծառայում, քան Արևմտեան Եւրոպա-  
 յի մերկանտիլիզմը: Պետրոսի նպատակն էր՝ ստեղ-  
 ծել հզօր արտաքին քաղաքական ոյժ թէկուզ ի վաս  
 ժողովրդի ներքին ոյժերի: Գանձարանի բոլոր մի-  
 ջոցները գոհուում էին բանակի ու նաւատորմի պէտ-  
 քերի համար: . . Այս պէտքերի համար արած ծախ-  
 սերն ամբողջ բիւջէի 96%<sub>0</sub> էին կազմում, իսկ մի  
 քանի տարում մնացած գումարները գործադրում էին

մերկանտիլիստական ձեռնակութիւնների համար,  
 ձեռնարկութիւններ, որոնց վերջին նպատակն էր  
 լրացնել միլիտարիզմի միկնոյն կարիքները: Ռուս  
 մերկանտիլիզմի ամբողջ ծանրութիւնն ընկնում էր  
 գիւղացիութեան վերայ, այս ծանրութիւնը վերջնա-  
 կանապէս ճորտ դարձրեց նրան և մինոյն ժամանակ  
 նպաստեց կալուածատէր ազնուականութեան ամ-  
 բապնդուելուն: Շուտով և հէնց այս կալուածա-  
 տէր ազնուականութիւնն ասպարէզ է գա-  
 լիս իբրև մի դասակարգ, որ հակուում ունի  
 ընդունելու այս նոր իդէոլոգիան» (մեր-  
 կանտիլիզմը. Թ. Ս.)\*)

Այսպէս ուրեմն. Արևմտեան Եւրոպայում  
 մերկանտիլիզմը հանդէս է գալիս իբրև  
 բուրժուազիայի իդէոլոգիա, իսկ Ռուսաս-  
 տանում՝ փոզի համն առած կալուածատէր  
 ազնուականութեան:

Իսկ հայ մերկանտիլիզմը: Որքն է արդեօք նը-  
 մանուում նա. Արևմուտքին թէ Հիւսիսին: Ոչ առա-  
 ջինին ու ոչ էլ երկրորդին. Արևելքի մերկան-  
 տիլիզմը բոլորովին նոր բնաւորութիւն  
 ունի:

Հայ հրապարակախօսի համար, ինչպէս տեսել  
 ենք, իդէալական են այնպիսի կարգերը, որտեղ հա-  
 սարակութեան մեծամասնութիւնը պարապում է երկ-  
 բազործութիւնով, այսինքն որտեղ դասակարգերի  
 մէջ ամենահզօրը գիւղացիութիւնն է: Նրա կարծի-

\*) В. СВЯТЛОВСКІЙ. Կր. 166:



քով իրերի այսպիսի դրութիւն կարող է ստեղծուել այն ժամանակ, երբ հողի մասնաւոր սեփականութիւնը վերացած լինի և հողն էլ համայնացրած: Նախ քանդեանը քարոզում է արտադրութիւն ոչ թէ սեփական սպառման համար, այլ շուկայի. բնական անտեսութեան փոխարէն շատագոյնում է ապրանքային ու փողային անտեսութիւնը, միայն այսպիսի պայմաններում, որ այս անտեսութիւնը չփաստէ գիւղացիութեան շահերին: Այս պայմաններն երեք են. 1. վաճառական ու արդիւնաբերող դասակարգը պէտք է կազմէ փոքրամասնութիւն. 2. այս դասակարգը նախապէս դրամական օժանդակութիւն տայ գիւղացիներին, որպէսզի սրանք կարողանան կրկնապատիկ ցանել ու հնձել և 3. արդիւնաբերող ու վաճառական դասակարգը մշակէ ու վաճառէ միայն շինականի արտադրած արդիւնքները: Ներմուծող առևտուրի փոխարէն, որը հայ հրապարակախօսն անուանում է ևրոպացոց համար ծառայութիւն ու միջնորդութիւն, և որը երբեմն կարող է օգտակար լինել վաճառականին, բայց ոչ ընդհանրութեանը, — նա առաջարկում է ազգային վաճառականութիւն, այսինքն գիւղացու արդիւնքների արտահանութիւնով զբաղուող առևտուր: Միայն այսպիսի առևտուրը դրամի շրջանառութիւնը կմտցնէ ազգի մեծամասնութեան, երկրագործ մասսայի մէջ. շինականի ձեռքը փող կանցնի, և նա կսկսէ փոքր ինչ ազատ շուկայ առնել: Ազգային վաճառականութիւնը օգուտ կբերէ թէ առուտուրով պարապողին և թէ մանաւանդ գիւղացիութեանը, որ է հասարակութեան հիմքը, լծակը,

շարժարանը «Երկրագործութեան» հեղինակը ձգտում է ստեղծելու հարուստ, բայց աշխատաւոր գիւղացիութիւն և միմիայն այս դասակարգի շահերի տեսակէտից է քարոզում մերկանտիլիզմ:

Կարծում ենք, որ մինչայժմեան մեկնութիւններն իրաւունք են տալիս մեզ հետևեալ եզրակացութեան յանդելու. մինչդեռ Արևմտեան Եւրոպայում մերկանտիլիզմն ասպարէզ է եկել իբրև առևտրական բուրժուազիայի իդէոլոգիա, մինչդեռ Ռուսաստանում նոյն ուղղութիւնն հանդէս է եկել իբրև կառուածատէր ազնուականութեան իդէոլոգիա, մեզանում, ընդհակառակը, մերկանտիլիզմը վառաբանուել է իբրև գիւղացիութեան բարօրութեանը նպաստելու մի միջոց. նրանով ողևորուել է հայ գիւղացիութեան թէորեալիզմը:

ՀԱՅ ՄԵՐԿԱՆՏԻԼԻԶՄԸ ԳԻՒՂԱՅԻՌԻԹԵԱՆ ԻԴԵՈԼՈԳԻԱ Է:

Այս հետաքրքրական յայտնութիւն է ոչ միայն հայոց գրականութիւնն ուսումնասիրողի համար, այլ և ուշագրաւ նորոյթ նոյն իսկ անտեսագիտութեան պատմութեան հանդիսարանում:

\* \* \*

Աւարտելով այս պատմական-գրական ակնարկը՝ մեզ մնում է աւելացնել, որ Նալբանդեանի



«Երկրագործութեան» վերլուծութիւնը խախտում է ի միջի այլոց նաև հիմունքն այն հայեացքի, ըստ որի 50-70 թուականներ ընկած ընթացքում գրականութիւնը միայն բուրժուական իդէոլոգիա է ներկայացնում: Սոյն հայեացքը պաշտպանողներին ի հերքումն կարող ենք մասնանշել հայ հրապարակախօսին, որ դէպի համայնացրած հողն ու մանր երկրագործութիւն էր կոչում սարուկ, աղքատ ու պանդուխտ ազգակիցներին:

Աշխարհիս հզօրների ջատագովը չէր Սիմէօն Մանիկեանը, այլ զրկուածներն ու տառապեալներն: Իւր կեանքով ու մահով այս նոր Գրակըսը հաստատեց, թէ իրաւունք ունէր իւր մասին գրելու այն սողերը, որոնք տպուած են «Երկու սողի» մէջ:

«Մենք ազատակամ նուիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրաւունքը պաշտպանելու: Մեր անձը և գրիչը չնուիրեցինք հարուստներին. նոքա իւրեանց արծաթի թումբերի տակ միշտ անխոցելի են նաև բռնակալների իշխանութեան մէջ: Բայց այն խեղճ հայը, այն հարստահարուած, ողորմելի, աղքատ, մերկ և քաղցած հայը, ոչ միայն ճնշուած օտարներից և բարբարոսներից, այլ և իւր հարուստներից, իւր հոգևորներից. . . ահա այն հայը ամենայն արդարացի իրաւունքով գրաւում է մեր ուշագրութիւնը, և նորան դարձեալ առանց և վայրկենական երկմտութեան նուիրեցինք մեր բոլոր կարողութիւնը: Պաշտպանել այն հայի առաթուր կախուած իրաւունքը է մեր կեանքի բուն խորհուրդը և նպատակը: Եւ այս նպա-

տակին հասնելու համար չէ պիտոյ ընկրկենք ոչ բանդի և ոչ աքսորի առջև, ոչ միայն բանիւ և գրչով, այլ և զէնքով և արիւնով, եթէ մի օր արժանի լինինք զէնք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատութիւնը նուիրել և սրբել մեր արիւնով»:

Օտարներից ու բարբարոսներից, այլ և իւր հարուստներից ու հոգևորներից հարստահարուած, ողորմելի, աղքատ, մերկ ու քաղցած հայը երբէք չի մոռանայ Կամիշլինի նահատակին, որը թէև վաղ մեռաւ, բայց երկար ապրելու է նրանց սրտում, որոնք երկրպագու են ժողովրդի բարօրութեան վսեմ իդէալին:

1912 թ. յունուար-փետրուար.

Կախ աւան:





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Ն Ե Կ
Յառաջաբան	U.
I. «Երկրագործութեան» արժէքը	1
II. Ի՞նչ է կապիտալիզմը	5
III. Շահագործող դասակարգի իդէոլոգիաները	9
IV. Կախ կապիտալիզմի դէմ	16
V. Երկրագործութիւն, հողի համայնացում, ինդիւ- ւիզուալիզմ	23
VI. Երկրագործութեան ջատագովումն ու հողի ընդ- հանրացման պահանջներն անցեալում	30
VII. Դասակարգ թէ ազգութիւն	38
VIII. Մասերիալիտատական նացիոնալիզմ	43
IX. Վարձկան մշակութեան Սցիլլան ու վաճառակա- նութեան Սարիբդան	48
X. Maximum ու minimum ծրագրեր	55
XI. Զլուծուած հանգոյց	64
XII. Վաճառականութիւնը երկրագործութեան ազախին	70
XIII. Ազգային արդիւնաբերութիւն	78
XIV. Գիւղացիութեան փողի մատակարարը	85
XV. Նալբանդեանը մերկանտիլիստ	91
XVI. Հայ մերկանտիլիզմը գիւղացիութեան իդէոլոգիա Վերջաբան	99 107



Լոյս են տեսել եւ վաճառուիմ են

**ԹՎԻՆՍ ԱՒԴԱԼԲԵԳԵԱՆԻ**

Տեսեալ պատմական-գրական վերլուծութիւնները.

1

**ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ**

Բովանդակութիւն.— Դասակարգ ու գրականութիւն: Հողերականութիւնն Արովեանի ժամանակ: Վաճառական դասն Արովեանի ժամանակ: Գիւղացիութիւնն Արովեանի ժամանակ: Գիւղը վէպի մէջ: Վէպի առաջին գլուխը: Վէպի միւս գլուխները: Վէպի մասերի արժէքը: Գիւղացու վերաբերմունքը դէպի երկրագործական աշխատանքն ու գիւղական կեանքը: Գիւղացու վերաբերմունքը դէպի փողային տնտեսութիւնն ու վաճառական դասը: Գիւղացու վերաբերմունքը դէպի հողերականութիւնը: Արովեանի վերաբերմունքը դէպի գիւղական տնտեսութիւնը: Վաճառականութիւնն ու հողերականութիւնը: Մեթոդ եւ հետեանքներ:

ԳԻՃՃ Է 15 կոպ.

2

**ՀՈՂԻ ՎԻՅՏԸ ՄՈՒՐԱՑԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ**

Բովանդակութիւն.— 19-րդ դարի առաջին յիսնամեակը հայ կեանքում: Գիւղի աղքատութիւնը Մուրացանի երկեւրում: Տնտեսական յեղաշրջում 19-րդ դարի երկրորդ յիսնամեակում: Փողային տնտեսութեան ազդեցութիւնը գիւղացիութեան վրայ: Փողային տնտեսութիւնը գիւղում: Բերքով ու փողով վաշխառութեան տարբերութիւնը: Փողով վաշխառութիւնը գիւղում: Գիւղը փրկելու ծրագիր: Գիւղացիական ուսուցիչը: Ինտելիգենցիան գիւղի վերապաքալ: Գիւղապաշտ միանձնուհին ու իդէալական գիւղի պատկերը: Մոռացուած տապանն ու Նոյի ազգանքը: Առաքեալը դասալիք: Յոստեսութեան նուագներ: Դառնութեան անխուսափելի բաժակն ու յարութիւնն ի մեռելոց:

ԳԻՃՃ Է 20 կոպ.

<< Ազգային գրադարան




NL0378934



Ձ Ք Ձ  
ԳԻՆԳ Է 40 ԿՈՍԿ  
Ձ Ք Ձ

Պէտք է գիմել գրավաճառներին.







70.160.